



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

5961

Աւանդ - Մոշի  
Գրիգորյան 1904. իշ

9(47.925)

V-22

7362 1906 ի.

D- 9K

5961

ՍԱՄԱՀՆ-ՄԱԿՅԻ ԿՈՒԽՆԵՐԸ

1904-ին

Հրազրի ոհ վաչանի գատկերսողակ

ին

**Սամահի Բարեկամի**

Հրազր.

Հ . Յ . Դ - Ա Շ Ա Կ Ց Ո Ւ Թ Ե Ա Ն

Ժ Ը Ն Ե Վ .

1906

9(47.925)

U-22

ՍԱՍՈՒՆ - ՄՈՒՇԻ ԿՈՒԽԻՆԵՐԸ

5 OCT 2011



Հ Ր Ա Յ Ի  
Արմենակ Պազուհան-Մամբրէսան  
1866—1904



Վ Ա Հ Ա Ն  
Կարապետ Տօղրամանիսան  
† 1904

102 5961

25 JUL 2019

1904

ՍԱՍՈՒՆ-ՄՈՒՇԻ ԿՈՒԽՆԵՐԸ

յիշատակին:

Սասունի հայ յեղափոխական Կահատակների

ՍԱՍՈՒՆ-ՄՈՒՇԻ ԿՈՒԽՆԵՐԸ

1904-ին

(Մասնակցողներու պատմածէն)

1. ՀԵՂԻՆԻ ԿՐԻՒՐԻ

1904 թւի յունեար 10-ին, Տավուներ (ԱԷՂԻԵԿՈՒՂԱՆԻ շրջանի մէջ մի ագրարակ է, ԱԷՂԻԵԿՈՒՂԱՆԻ մէկուկէս ժամ հեռու՝ դէպի արեւելա-հարաւ) հաւար եկաւ Խշինձորէն՝ թէ միւտիր Քօռ Ալօն 15 սուարիներով և իր աշխրէմով եկեր է՝ չեղին, Արտկոսք, Ընկուղնակ և Խշինձոր՝ թալանելու: Վահանին և Անդրանիկի կարգադրութեամբ, մարտական խմբի անդամներէն մի քանիսը՝ Գէորգ Չափուշի և Մուրատի զեկավարութեան տակ՝ հան օգնութեան կուղարկւին: Տղայք կը հանին Խշինձոր, ուր փախեր եկեր էր հեղնցի հարուստ հայ մը, Վարդան անունով, և օգնութիւն կ'ուզէր հայ զինւորներէն իր պատիւը և կայքը ազատելու համար:

Այս Վարդան առաջ ոչ մի հաւատ չունէր յեղափոխութեան վրայ և կը մոտածէր սուլթանի հաւատարիմ հպատակ ձեւանալով՝ ապահովել զինքը: Դա մի ժամանակ նշյնիսկ մատնիչ ձանչցւեցաւ յեղափոխականներու կողմէն, որոնք պիտի սպաննէին զինքը: Անգամ մը Քօռ Այստանի աւագակը չեղին գալով կը յափշտակէ յիշեալ Ապարդանի 60 ոչխարը, Յ ձին և 20 ոսկի գրամը: Այդ



2678-2002

ժամանակ միայն կը համոզւի սուլթանի հաւատարից՝ հպատակը, որ խաբւեր էր իր հաւատքին մէջ և որ „Հաստն ու բարակը մէկ գին ունին“: Եւ միակ միջոցը կը գտնէ՝ յեղափոխականներուն դիմել և անոնց պաշտպանութիւնը խնդրել: Ասոր համար էր որ նա Խշնձոր եկած էր: Տղայք, առանց ի նկատի ունենալու վարդակի հակայեղափոխական անցեալը, վեր կը կենան գնալու Հեղին՝ աւաղակը պատժելու համար: Երբ տղայք ձանապարհ կ'ինան՝ քրդերը կ'իմանան անոնց շարժումը և անմիջապէս կ'իմացնեն Քօռ Սլօին: Սա Փուսուր կը փախչէ՝ կառավարութենէն ուժ ստանալու համար, որովհետեւ այդ ատեններ Տիգրանակերտէն Փուսուր էր եկեր 400 հոգիէ բաղկացած գունդ մը զօրք:

Տղայք Հեղին հասնելուն՝ կը գրեն Քօռ Սլօին, որ տարած թալանը ետ դարձնէ: Նա կը մերժէ թալանը դարձնել և բագրանցի աշխրէթն ալ օգնութեան կը կանչէ. միենոյն ժամանակ նամակ մը կը գրէ տղայոց՝ թէ ինք նպատակ չունի հայերու հետ թշնամանալ. այլ կառավարութիւնն է որ այդ ընել կուտայ:

Ճիշդ այս ժամանակներ Հեղին կ'երթան նաև քանի մը ահարոնքցիներ, որոնք նոյնպէս օգնութիւն կ'ուզէին տղաքներէն: Մի քանի օր առաջ քրդերը Ահարոնիի վրաց էին յարձակւեր և սպաններ ինն հոգի հայերէն և փակցուցեր եօթ տարեկան մի աղջիկ: Զարագործները բոլորզին ազատ էին, բայց կառավարութիւնը համիտական արդարադատութեամբ՝ եղած ոճրագործութեան համար իբր յանցաւոր ձերբակալած էր հայերէն ուժ հոգի:

Երբ Սլօն զօրքեր ու քրդեր հաւաքած Հեղինի վրաց կուգար՝ տղայոց ոգեորութիւնը սահման չունէր. կոի սկսաւ, բայց յեղափոխականներու մօսինները թոյլ չոււէին

Թշնամիներուն առաջանալ վերջինները պարտաւորւեցան շուտով ցրւիլ և քաշւիլ: Այդ տեղի ունեցաւ յունեարի 17-ին<sup>1</sup>:

Երբ թշնամինները քաշւեցան, տղայքն ալ չմնացին գիւղի մէջ. իրենց հետ վերցնելով գիւղացինները և անոնց շարժական կայքը, անցան Անտկունք: Զինւորներէն պօղոս քանի մը ընկերներով մնաց Մեզրէ՝ Հեղինի գիծը պաշտպաններու, քրդերու յանկարծակի յարձակման պարագային: Մի օր Մեզրէի մօտեր կ'երևէն մի քանի քրդեր, լրտեսնելու համար այդ կողմերը. առանցմէ մէկն էր Սլէ՛ անուն յայտնի ոճրագործը, որ սպաններ էր չորս հայեր և Սելորի մատնիչներուն միացած՝ մեծ դեր էր խաղացեր մատնութեան գործին մէջ: Պօղոս կ'իմանայ այդ քրդերու ներկայութիւնը՝ յանկարծակի բերելով կը բռնէ երեքն ալ: Կըսպաննէ Սալէ՛ը, իսկ միւսները ազատ կ'արձակէ: Այդտեղէն Պօղոս կ'անցնի Ընկուզնակ. ուր եկեր էին նաև Մուրատ և Գէորգ Չափուշ:

## 2. ՅՈՒՆԱՆԻ ԿՈՒԻ ԻՐ

Յունատը ամսին Հրայր և Առաքել Հինգ գինւորներով դաշտն էին իջեր գործերը կարգադրելու և զինւորական խորհուրդ կազմելու: Համար կառավարութիւնը իմանալով անոնց ներկայութիւնը՝ կըսկսի հետամուտ լինիլ զիրենք բռնելու: Սուրբ Սարգսի պահոց առաջին օրերը՝ Առաքելը կը բաժնւի Հրայրէն և Յունան կ'երթայ

<sup>1</sup> Հեղինի մէջն է 1894-ի կոխմերու յայտնի ներս Ժերման Գրզոյի գերեզմանը:

չորս ընկերներով. այնտեղ մէկ-մէկ, երկու-երկու կ'ապրին  
հայոց տները մի քանի օր: Փետրւարի սկիզբին լուր կը  
բերեն Առաքելին, թէ զինւորները պաշարեր են Գրիգոր  
և ջնտօն: Խօսն դուրս կուգայ խմանալու համար թէ ինչ  
կ'անցնի կը գառնայ: Դուրսը նա կը նկատէ, որ զինւորները  
խոտեր վերցուցած կը տանին տղայոց գտնաւծ տունը  
այրելու: Խօսն կը կրակէ հրացանը, որու ձայնէն Առաքել  
և ընկերներն ալ դուրս կը նետւին տուներէն ու կը  
յարձակին զինւորներուն վրայ: Զինւորները փախչելով  
կը մասնեն Մեղրագետի թմբերուն տակ: Առաքել երկու  
հոգու զիւր պահէ կուտայ զիւղի աղայի տունը (քէօշէ),  
որ զիւղի մէջ ամենաբարձր շինութիւնն է, իսկ ինք մէտ-  
ընկերներու հետ թիւրք զինւորներու ձիերը կը բերէ և  
քէօշէ տակ պատրաստ կը պահէ: Թիւրք զօրքերը առ-  
գէն հաւարը ձգեր են ամէն կողմ: շուտով օգնութեան  
կը հասնի նորշէնի զօրքը: Կուտի բաւական սաստիկ կեռ-  
պարանք կըստանայ: Կուտի ժամանակ մի զինւոր ները  
մնարով տղայոց արձակած գնդակներէ՝ կը փախչի և կը  
մանէ տուն մը. Խօսն կը նկատէ զայն և խոտ կը բերէ  
այրելու զանիկա տան մէջ: Տանտէրը, որ կնիկմարդ մէն  
էր, կը միջնորդէ և չուղեր թոյլ տալ որ Խօսն իր գե-  
տաւորութիւնը կատարէ, ճիշդ այն ժամանակ, երբ Առա-  
քելի ձայնն ալ միւս կողմէն կը կանչէր Խօյին, որ զին-  
ւորի մը համար ժամավաճառ չլինի, այլ կարգին զիւր  
մը պահպանէ, բայց կինը չի մունար զինւորին հրացան  
ու փամփուշտները առնելէն յիտոյ միայն արձակել:

Հրացաններու բերնէն արձակւող կրակը և վառողի  
հոտը՝ կ'արծարձէ տղայոց կուի եռանդը: Առաքելը հեղ-  
նելով թշնամիներու ուժը և պուալով կըսէր. „Եյդպէ”

100-ով 200-ով կ'ուղեքը մեղի հետ զլուխ ելնել, անի-  
ծածներու լաւ զիւցէք, որ խաբւած էք”:

Խոկ կտրիծ խօսն արծւի պէս կտուրէ կտուր կը թռչէք  
կուելու ժամանակ՝ զիւրերը պահչելու համար: Երեկոյ-  
եան ժամը 3-ին կոխը կը վերջանայ, տղաներուն ոչ մէկ  
վեսա. թիւրքերէն կըսպաննեփ մէկը և մէկ ալ կը վիրա-  
ւորւի: Երբ մշուշը կը թանձրանայ գաշտին վրայ և  
մութը կամաց-կամաց կը տիրէ, մեր քաջերը կը նստին  
զօրքերէն խլած ձիերուն վրայ և կը հետանան զիւղէն:  
Կուի ձայնէն շրջակայ զիւզացիներ և Հրայր՝ կը պատ-  
րաստուին օգնութեան հասնիլ. բայց տղայք արդէն հե-  
ռացած էին:

### Յ. ՏԱՓԲԱՔԻ ԴԱՒԱՐՈՒՈՒԹԻՒՆ<sup>9</sup>

Երբ Յունանի կուի լուրը Տավրներ կը հասնի, Սե-  
պուշ, Միբատ և Ասսատուր՝ զինւորները վերցնելով կ'ուղեն  
օգնութեան գնալ և կը հասնին մինչեւ Հաւատարիկ: Անդ-  
րանիկն ալ մի ուրիշ խմբով մինչև քոփի կուգայ նցյն նը-  
պատակով: Քոփի մէջ Անդրանիկ կ'իմանայ, որ մի քանի  
տափրքի քիւրգերը որոնց զիւղն եղած էր նախորդ գի-  
շեր, մոռագրած են եղեր սպաննել զինքը: Ետ կը կանչէ  
Անդրանիկ և անոր հետ միասին կը վերագառնայ Տափրք:  
Այնտեղ կը հաւարէ քրդերը և կը պահանջէ, որ ան-  
պատճառ իրեն յանձնեն իր գէմ դաւագրութիւն սար-  
քողը. քրդերը կը յանձնեն դաւաճանը, որ կըսպաննեփ  
անմիջապէս Անդրանիկի հրամանով: Այնուհետեւ կը գրա-  
ւեն քիւրգերու քէօշկերը, 24 գէնք, 400 ոչխար և 100-ի  
չափ տաւար: Երենց սիրելի հերոսի կեանքի գէմ եղած  
դաւագրութեան լուրը առնելով Աէմալի, Շէնըքի, Կէ-

լիէկուզանի, Շուշնամերկի, Քոփի, Կարմավի, Աղբի, Կրիցունքի, Ալիանցիքի և ուրիշ գիւղերու իշխանները իրենց զինուորներով, մօտ 300 հոգի, անմիջապէս Տափլք կ'իջնեն՝ յանցաւորները պատժելու բայց մինչեւ անոնց հասնիլը, պէտք եղած կարգադրութիւնը ըրեր էր Անդրանիկը: Աշ կարգադրուի նաեւ, որ քիւղերը բոլորովին հեռանան Տափլքէն: Այստեղ հայերը գտան քիւրգերու մօտ իրենցմէ թալանւած և տարւած շատ մը գոյքեր:

Տափլքի գաւադրութենէն մի քանի օր յետոյ, Տիգրանիկերտէն Սասուն կուգայ գունդ մը նոր զօրք: Գէորգ Զափուշ նամակ կը գրէ Տափլներ և օգնութիւն կ'ուզէ: Ատոր համար ալ Մմբատ մի քանի զինուորներով կ'երթայ կը միտնայ անոր: Մմբատ երկար չի մնար Ընկուզնակ այլ կ'անցնի Տալորիկ, որ շարունակ Բուսանաց քիւրգերու սարսափին ենթակայ էր: Քիչ վերջ Գէորգ Զափուշ ինքն ալ կ'երթայ Երակոնք, ուր նոր զօրքեր էին եկեր: Իսկ իր տեղը Ընկուզնակի մէջ կը թողու Միիթարը: Գէորգ Զափուշ այդ երեք գիւղերու վրայ կը հսկէր շատ արթուն կերպով:

#### 4. ԱԱՃԿԱՆՑԻՔԻ ԿՈՒԽԻՐ

Դաշտին մէջ կազմեր էին ջան-բէզպարներու խմբեր, որոնք կը մտնէին հայերու գիւղեր և ամէն տեսակ նեղութիւններ կուտային բնակիչներուն: Այս անզամ լուր կը հասնի, որ անոնք մտեր են Քիւրգմէյտան (ասոր կողքին կը դանուին հին Օղական ամրոցի աւերակները), Շէիլան, Վըզըլաղաճ (Հըսոյր այս գիւղէն էր) գիւղերը և կ'աւերեն: Անդրանիկի, Վահանի և Հրայրի կարգադրութեամբ՝ Մուրատ երկու զինուորներով դաշտ կ'իջնէ մօտէն իմանա-

լու այնանդ կատարւածները, վերցնելու կամաւորներ և Տափլներ խորհրդի կանչելու պատասխանատու մարմինը: Մուրատ իր շրջանը կատարելէ յետոյ՝ Սասուն կը վերադառնայ, հետք բերելով 20 կամաւոր զինուորներ. զանոնք կ'ուզարկէ Տափլներ, իսկ ինք կ'երթայ Շէնըք: Այդ ատեններ կառավարութիւնը եռանդով պրօպագանդ կ'ընէր թիւրքերու և քիւրտերու մէջ՝ յանուն իսլամութեան դէնք վերցնելու հայերու դէմ:

Մեծ-պահքի վերջին օրերը, Տլափակեաժի հայեր իրենց բարեկամ քիւրգերէն կ'իմանան, որ թիւրքեր և քիւրգեր մտադրած են իրենց վրայ յարձակւելու ատոր համար լուր կ'ուզարկէն Շէնըք և Տափլներ ու օգնութիւն կ'ուզեն: Ալ կարգադրւի օր Շէնըքէն, Աէմալէն և Ալիանցիքէն ԱՅ-ական զինուոր և շալակաւորներ վերցուցած (վտանգի կուի բոպէններուն գիւղի շարժական կայքը փոխագրողներ կը կոչւին շ ա լ ա կ ա ւ ո ր) Մուրատ երթայ Տլափակեաժցիները փոխագրէ. բայց մինչեւ որ Մուրատ կը հասնի, ուղիղ զատկի շաբաթ օր քիւրգերը ամբողջապէս կը սրբեն գիւղը, իսկ բնակիչները իրենց հետ տանելով կը բանտարկէն: Մուրատ օգնութիւն հասցնելու յոյս չունենալով, կը վերադառնայ Աէլիէկընման և այնտեղէն զինուորներ ու շալակւորներ կը ճամբէ Աէլիէմսուրը զատարկելու, որ նոյնպէս թալանւելու վտանգի մէջ էր:

Աէլիէկընմաննեն քիչ հեռու կը գտնւի քրդական փաքր գիւղ մու, ուր կը գտնեէր քիւրգ լաճրկանցի կոչւած աշիրէթի պետ Գալօ: Միւնայն օրն էր, որ հայերը Աէլիէմսուրը կը դատարկէին. Գալօն իր մօտը կը կանչէ լաճրկանցիներու, պատրկանցիներու և ուրիշ քիւրգ աշիրէթներու երիտասարդները՝ մօտ 500 հոգի, և պատրաստութիւններ կը տեսնէ յարձակւելու հայ գիւղերու վրայ,

Աէլիէմսուրէն հայերը իրենց հետ բերած էին նաև մի քրդացած հայ, Սէլիմ անունով, որ մի ժամանակ Տամատեանի զինւորներէն էր եղեր: Գալօն լուր կ'ուզարկէ Վէլիէկընման հայ խմբապետներուն՝ վերադարձնելու յիշեալ քրդացած Սէլիմը. մերոնք կը մերժեն: Գալօն Էրկրորդ անգամ կը դնէ իր պահանջը և միւնոյն ժամանակ կըսպառնայ բնացինց ընել Վէլիէկընման՝ եթէ Սէլիմը չվերադարձւի իրեն: Հայերը կ'ուզարկէն միւնոյն մերժողական պատասխանը, նաև կ'աւելցնեն, որ „Եթէ կ'ուզէք կուիլ, յիմարութիւն է ձեզի համար բոլէ կորսնցնել, մենք ձեզ կ'ընդունիք, ինչպէս որ պէտքն է“ . . .

Մարտ 30-ի իրիկւան, ժամը 6-ին, Վէլիէկընման Հը հասնի պատըկանցի Արթինի եղբօր տղայ Մանօ, որոնց ընտանիքը, տունն ու տեղը կը գտնւէր քիւրդերու մէջ: Քիւրդերը սրէ էին անցուցեր ամբողջ ընտանիքը և կողոպտեր տունն ու տեղը. Մանօն միւյն կրցեր էր մի կերպ ազատիկ՝ քիւրդերը անոր ետեւն եկեր էին մինչև Վէլիէկընման: Մերոնք Մանօյի պատմութիւնը լսելէ յետոյ, կը վազեն գիւղէն դուրս՝ գէպի գիւրդերը քիւրդերու հրացաններու ձայնը գնալով կը շատնայ, դիրքերէն կը լոււէր մերժոց պատասխանը: Մութը կամաց-կամաց կը հուխեր, ցուրտն ալ կը սաստիանար. երկու կողմէն բաւական հրացանաձգութենէն յետոյ՝ քիւրդերը կը քաշւին:

Ըստօտը բացւեցաւ, բերելով իր հետ արեան քրեժի օրը: Լուսաբացին սէմալցի զինւորներու մէջէն քրդացած Սէլիմը կը յաջողի մի կերպ փախչիլ: Խարօն ժք քանի զինւորներու հետ կ'աճապարէ զոյն փնտուելու երբ գիւղէն դուրս կուգայ, կը նկատէ, որ քիւրդերը արդէն եկեր և գիւղին մօտ, թիւրի ետեւ գիւրը բոնել են. անմիջապէս կը կրակէ հրացանը, և կուիւր կըսկսէ

երկու կողմէն: Հրացաններու ձայնէն՝ Մուրաս գիւղի մէջ թողնելով Շէնըքի իշխանը, ինքը զինւորներով կուի վայր կը թուշի. անոր նպատակն էր առաջին անգամ մի կերպ կուի առաջն առնել: Բայց երբ կը տեսնէ, որ քիւրդերը արդէն գիշերանց պատրաստւած են եղերյարձակւելու, Գալօն ալ թուրը ձեռք բոնած՝ սալավաթ տալով քրդերուն միրտ կուտար ու առաջ կը քշէր, և մանաւանդ երբ կը տեսնէ Խարօյի մարմինը արեան մէջ շաղախւած և անկենդան գետին ընկած, ալ կրակ կը կորի. „Վրէժ, ընկերներ, վրէժ“ կանչելով առաջ կ'իշնայ: Ընկերները տեսնելով անոր ինքնամուացութիւնը, կ'ուզեն ետ կեցնել զայն և անոր փոխարէն իրենք կուիլ բայց անոր հօգու մէջ սկսւած փոթորիկը, նաշատակ Խարօյի վրէժը՝ անոր թեւէր տւած էին: Այդ ինքնամուացութեան և արիութեան օրինակը շուտով կը վարակէ բոլոր ընկերները, և կրսկսի կատաղի կուիւր: Չնայած որ քիւրդերու բոնած գիւրդերը աւելի լոււ էին քան մերժոցը, այսուհանդերձ քիւրդերը մէկիկ մէկիկ գետին կը գլոււէին: Գալօ աղան ար որ հայերը ջնջելու երազներ կը տեսնէր, մուրազին չշատած զօն զնաց ֆէգայու վրիժառու գնդակին: Շէնի քիւրդերը աճապարած էին Գալօյին օգնութեան հասնիլ: Շուտով կուի տեղը կը հասնին նաև Խան, որ Ոէմալէն կուգար և շէնըքի Պապար: Տղայք նոր թափով իր կը յարձակին, կը քշեն քիւրդերը իրենց գիւրդերէն և գնդակներու կարկուտի տակ կը փախցնեն. քիւրդերը գիւղ կ'ապաստանին: Տղայք գէպի Գալօյի գիւղը կը յառաջանան. կուիւր այժմ փոխագրրւած էր մի ձորի մէջ Սէմալի իշխան Մանուկ և պատրկանցի Արթին կը բոնեն երկու կողմի կաժերը (կ աժստունցոց բարբառով կը նշանակէ գագաթ բլուրի կամ

լերան), որպէսզի քիւրդերու այդ կողմէն յարձակումը արգիլն. իսկ Մուրատ կուելով դէպի գիւղը կը յառաջնար. երբ նա արդէն գիւղն էր, կառւրներու վրայ, ձայն առաւ ընկերներուն խոս բերելու և գիւղը բնակիչներով հրդեշելու համար. Քիւրդերը տներու մէջ փակւած կը պոռային, կ'աղաքէին, որ իրենք անձնատուր կը լինին, իրենց խնայեն: Ատոր վրայ հայ զինւորները կ'ուզեն գիւղը մտնել զինաթափ ընելու դանոնք. բայց քրդերը ստեղով՝ իրենց խոսաման հակառակ, կրակ կ'ընեն, որմէ կ'ընկնի երկու տղայ: Այս ատեն Մուրատ առանց ժամանակ տալու քրդերուն՝ զինւորներով անոնց տները կը մտնէ և կը կոտորէ, իսկ կոտոյի Հաջին միւս կողմէն կ'այրէ գիւղը: Այս կուէն մէջ քիւրդերէն կը կոտորուի և մարդ, իսկ մերիններէն անոնք՝ որմնց մասին յիշւեցաւ արդէն: Քիւրդերէն վերցւեցաւ 17 հրացան:

Պէտք էր տեսնել այս կուփ ժամանակ սասունցի կիներու ոգեսորութիւնը, որոնք հաց, ուտելիք, ուազմայրեթերը են. շալկած՝ կուփ տեղը կը տանէին և իրէնց քաջալերական խօսքերով կը խրախուսէին կուողները: Կուէն յետոյ Կէլիէկընման կը պարապի, բնակչութիւնն ալ իր շարժական կայքով զինւորներու հետ կը քաշւի Շէնըք:

Այս կուէն երկու օր վերջ, քրդերը յարձակեցան Ռովասարի, Արդիսու և Քորախու գիւղերու հայերու վրայ, առւները այրեցին ու կողոպտեցին. Տալւորիչէն Սմբատ օգնութեան հասաւ, բայց թալանի մի մասը միայն կարողացաւ վերադարձնել:

### Յ. Շէնըքի կուիիր

Ապրիլ 6-ին Շէնըք-Աէմալի մէջ նամակ մը ստացւեցաւ Անդրանիկէն. նամակի մէջ ըսւած էր. „Մուշէն երկու գունդ զօրք կուգայ. մէկը կը քալէ դէպի Հաւատարիկ, իսկ միւս մասը պիտի գայ Շէնըք-Աէմալի վրայ պատրաստ կեցէք“ Շէնըք գանւող ժողովուրդը պահչովութեան համար տեղափոխւեցաւ Աէմալ. գիւղը դատարկւեցաւ, բայց մերմնք գիւրք բունած կըսպասէին: Առաջին փորձէն կառավարական զօրքը չկարողացաւ գուշ Շէնըքը որովհետեւ բաւական շատ ձիւն եկած էր և գոցած ճամբաները, բայց ապրիլ 11-ին սուարիները (Հեծեալ զինւոր), թւով 700 հոգի, մասն Շէնըք: Սեպուհ և Աւետիսն ալ Ալիանցիքի կողմէն Շէնըք հասան. մերմնք գիւրքերէն՝ իսկ զօրքերը գիւղի մէջէն սկսան կուիւր, որ տեսեց և ժամ: Թիւրքերը տղայց կրակի առջեէն պարտաւորւեցան քաշւիլ կամաց-կամաց. մերմնք վրայ յարձակւելով քշեցին զանոնք մինչեւ Գալօյի գիւղը նախորդ կուփ տեղը: Այս կուփ մէջ սպաննեցաւ ալիանցի կրտութ Աիրօն, իսկ թշնամու կորուսալ եղաւ և սուարի և քիւրդ սպաննեւած, 13 հոգի վիրաւորւած և 7 հրացան կողոպուտ տրւած: Այսքան կորուստներ տալէն յետոյ՝ բնականարար կառավարութիւնը ետ չպիտի մնար իր ծրագրէն, որով նա սրոշած էր հայ տարրը ջնջել Սասունէն, ապագայ բարգութիւններու առաջն առնելու համար: Ատոր համար նա անշուշտ պէտք էր Սասուն ուղարկէր նոր և աւելի մեծ ուժեր: Աերմնք կը գուշակէին այդ, ուստի կուէն յետոյ Աէմալ վերադարձան, կուփ նոր պատրաստութիւն տեսնելու և նոր ծրագիր կազմելու համար:

6. ԱԷՄԱԼԻ ԿՐԻՒԲ

Սէմալի Ճանապարհներու վրայ նշանակւեցան զինորդներ՝ թշնամու շարժումները գիտելու համար: Ապրիլ 12-ին, ցերեկւան ժամը 6-ին Սէմալ եկաւ Ա. Յովհաննու վանքի Առաքել վարդապետը, հետը բերելով պատրիարքական կոնդակը և սուլթանի իրատէն: Կոնդակը կը հաւաքրէր սասունցիները հնազանդ ու խաղաղ լինել և լինել սուլթանի հայրական (?) կարգադրութիւններուն, իսկ սուլթանի իրատէն ներում կը շնորհէր բոլոր ըմբռսաւացող տեղացիներուն և ազատ Ճանապարհ կուտար Սահման գտնուող օտարական յեղափոխականներուն՝ ետ գառնալու իրենց երկիրները: Այդ օր Սէմալ եկաւ նաև Ընդբանիկ: Վարդապետը վերադարձաւ տուանց գրական պատասխան ստանալու: Գե-ի գէպքերը բաւական ապացոյցներ չեն հաստատելու, որ չէ կարելի բնաւ թշնամու խոստուցիւրուն հաւատալ և միշտ յիշեցնելու յեղափոխականներուն, որ այդ տեսակ բոլոր պաշտօնական բանակցութիւնները լոկ „պատրւակներ“ են ժամանակ շահէլու և պատասխանաւութիւնը վրայէն նետելու: Առոր համար Մէրժեցան կոնդակն ալ, իրատէն ալ:

Շէնըք ու Սէմալ Սասնոյ Շատախ գաւառի ամենավիճ գիւղերն են և կը գտնեին փոքրիկ սարահարթի մը վրայ, Շէնըք գէպի արեւուտք, իսկ Սէմալ գէպի արեւելք: Սէմալի առջևէն արեւելքէն արեւուտք կարելով կ'անցնի ջուր մը որուն տեղացիներ Զայ կ'անուանեն: Զայի Շարաւային կողմը անմիջապէս կը բարձրանան շարք մը րլուրներ, որոնք Շատախը կը բաժնեն Սասնոյ միջն մասէն և որոնք կ'որոշւին Զայի գլուխ անունով Շէնըքի կողմէն գետի տափարակութիւնը աւելի կ'ար-

կարածգւի գէպի հարաւ, այդ տափարակի հարաւի վերջաւութեան վրայ կը գտնեի ուրիշ գիւղ մը, Ալիանք կամ Ալիանցիք անունով,

Երբ Առաքել վարդապետ Սէմալի մէջ յեղափոխականներու հետ բանակցութեան մէջ էր, միւս կողմէն կառափարութիւնը ութ վաշտ զօրք բերած՝ բանակեցուցած էր Շէնըքի մօտ, ուր հաւաքւած էին նաև 3-4000 քիւրդ: Թշնամու միաբն էր բանակցութեան վերջանալուն պէս վրայ տալ երկու մասի բաժնած էր իր ուժերը, մեծ մասը պիտի յառաջնար գէպի հարաւ, Ալիանքի վրայով անցնելու Բէրբէրի հովիտով և մանել Կէլիէկուզանի հովիտը. իսկ միւս մասը պիտի յառաջնար գէպի արևելք՝ Սէմալ, Զայն ու Զայի գլուխները անցնելով նորէն պիտի մանէր Կէլիի հովիտը: Ասոր համաձայն ալ մերոնք բաժնեցին իրենց ուժերը: Անգրանիկը գնաց Տափրկի գիծը, Հրայր, Մարտիրոս, Սեպուհ, Աւետիս և Խոօն գնացին Ալիանքի գհծը պաշտպանելու, իսկ Մուրաս, Հաճին և Տօնօյի Մակար պէտք է պաշտպանէին Զայը և Զայի գլուխները (Մէնէրոս լեռ): Սէմալի ժողովուրդը կամաց կամաց քաշւեց Կէլիէկուզան: Մէնք պէտք է պատմինք նախ Ալիանքի կողմը անցած-դարձածները, ապա կը դառնանք գէպի Զայը:

Առաւօտը բացւելուն պէս՝ թշնամութերը սկսան որոտալ և ուռմբերը պայթեցան Ալիանքի շուրջը: շատերն ալ իրեցան ձիւնի հաստ կեզկի մէջ և մնացին տուանց պայթելու: Ձիւնապատ և տուած զիրքերէն ֆէպայու մօսինը իր բերանը թշնամիներուն դարձուց: Դիմացի ձիւնապատ, սպիտակ տարածութիւնը սկսած կ'երեւ թշնամու անհամար շարքերէն: Թնդանօթներու բերնէն թաջող առաջին ուռմբերու հետ սկսաւ շարժւիլ դաշտի



այդ սև ֆօնը: Երկարաձգւեցաւ, երբեմն ամփոփւեցաւ և երբեմն բաժան-բաժան եղաւ, բայց զօրքերու կարգերը միշտ յառաջացան, սուլիններու անտառը փայլեց և հրացանները միահամուռ կրակւեցան: Քրդերու բազմութիւնը ոչ կարգ կը ճանչնար և ոչ կանոն. թուրերը մերկացուցած՝ հարայ-հուրայ տալով կ'առաջնորդէր բանակը:

Հայ փէդային չոքած ձիւնի ու սառոցի վրայ, մօսինը կուրծքին սեղմած, գնդակներ թափեց թշնամու վրայ, հրացանի բերնէն թռչող ամէն մի գնդակ իր սրտէն պուրող մի-մի վրիժառու սլաք լինէր կարծես, որ կ'երթար թշնամիներու կուրծքին մէջ մխւելու. իսկ վերեւ փողիողացող դրօշակը մահ կամ ապատութիւն կը կանչէր: Առսկալի էր կոփւր. թշնամու գնդակները կարկուտի նման կը թափւէին և ջարդ ու փշուր կ'ընէին քար, հող թռումը և կը սարսեցնէին լեռ ու ձոր. բայց անսասան էր աղատութեան տենդով բռնւած փէդային, որ արագ-արագ գնդակներ կը տեղաւորէր թշնամիներու սրտին մէջ, առանց ուշագրութիւն դարձնելու չորս կողմ փփացող գնդակներուն և դէս ու դէն փշուող թափւղ քարերուն ու հողերուն: Թշնամու կարգերու մէջ հազիւ ժամանակ կը դանւէր դիակները փոխադրելու: Թշնամին շատ յամառ կ'երեւը. ոչ մի զոհի առաջ նա միտք չունէր կանգ առնել, միայն կը սեղմէր իր կարգերը և յառաջ կը քալէր: „Մենք այսօր Կէլիէկուզան պէտք է առնենք, Անդրանիկ փաշան Տափրէն է, Գէորգ Զափուշ Խշինձորն է“ կը զոռային: Թշնամու անդադար առաջ նազացող կարգերէն մերոնք պարտաւորւած էին փոխել իրենց գիրքերը: Աւետիս, Խօսն, Մարտիրոս և Մոկացի Քեռին կը կուէին Անտառի կողին վրայ. Հրայր, Անպուհ, Սէմալցի Արպէն. Գէզօն և Մուշեղ որոշած էին անպայման կերպով կտրել

թշնամիներու առաջ և մեռնիլ կամ ետ քշել զանոնք: Անհաւասար ու կատաղի կուէին մէջ կը վիրաւորւի Սեպուհը, կրսպաննելով Անպուհի վիրաւորւիլը, կ'երթայ ետեւէն զայն հետը վերցնելու. Անպուհը կը կանչէ, կ'աղաջէ Հրայրին թողուլ զինք, չգնալ իր ետեւէն, իրենց պաշտպանութեան համար աւելի բարձր, ամուր գիրքեր բռնելը բայց Հրայր չուզեր անոր լսել ու կը պատասխանէ: „Կամ կրսպաննելիմ, կամ քեզ ալ աղատելով հետս կը տանիմ“: Թշնամին եկած գնդակները աւելի ու աւելի կը հետեւէին Հրայրին, մինչեւ որ նա կ'ընկնի անոնց տարափին տակ: Ակրաւոր սեպուհը կը համբուրէ անձնազոհ ընկերոջ գիտակը և կը հետանայ սողալով. քիչ վերջ նկատելով որ բաւական ծանր է իր ստացած վերքը՝ դաշոյնը կը հանէ ու կը փորձէ սիրաը իրել, բայց ընկերները նկատելով այդ, կ'առնեն դաշոյնը ձեռքէն և զինք ալ վերցնելով հետեւնին կը տանին: Մերսնք իրենց ուժերը կ'ամփոփին Բէրբէրի կիրճի բերանը, ուր թիւրք գորքը կը կուէր ամենամեծ թափով անցքը գրաւելու համար, որ զիրենք պէտք է տանէր գէպի Կէլիէկուզան: Աւետիս, Խօսն, Համզօն պինդ կերպով գոցեր էին կիրճի բերանը. կուի միջոցին մի սասունցի կին բարձր գիրքի մը վրայ կանգնած, կը կանչէ, կը խրախուսէ կուողներուն ըսելով. „Հէմէ՛, տղէ՛ք, մալովա խպըտէ՛ք, Անթուան փաշէն ՄՃենու դէն էկաւ, Գէորգ Զափուշ էկաւ իշխնձորի կողմէ, աւ խպըտէ՛ք, ձեր հոգուն մատա՞ղ, ըուօմ կոտրվաւ, պավէմըն ժի խըպըտէ՛ք, ազգի հաց հալալ ըլնի ձի, հայ զինւորնե՛ր, որն որ պաշ չխըպըտի, կնկտուս սաւան էնոր գլխուն թալինք, հալա տէ հալա, տէ հալա, ասկարէ ում կոտրվաւ, հայոց իմտատ շատցաւ“:

Երկար չանցնիր. տղայոց անսխալ հարւածներէն կիրճի բերան զօրքը կանգ կ'առնէ. գլուխը կը կորսնցնէ և կըսկսի ետ քաշւիլ. Փողը յառաջանալու, յարձակւելու նշան կուտայի բայց զինւորները ջարդւած՝ ետ ու ետ կը նահանջէն. այն ատեն մերոնք վրայ կուտան, աչագին զօրքը նախիրի նման առջենին առած՝ կը հալածնն և շատերը ողջ ողջ բռնած կը կոտորեն: Փախչող զինւորներէն ու հոգի չկարողանալով փախչիլ աննկատելի կերպով կը պահպատին ձեան հիւսի մը տակ և կըսպասեն հայերու քաշւելուն, որպէսզի գնան ու միանան բանակին: Կիրճի կուտին մէջ ծնկներէն ծանր կերպով կը վիրաւորւի ախլցիսցի Մատօն (Մարտիրոս). Երբոր ընկերներէն մէկը կը մօտենայ անոր, թեր կը մտնէ և կ'ուզէ գուրս տանիլ կուէն, նա կը պատասխանէ. „Դուք ինձմով մի զբաղւիք, յաղթութեանը նայեցէք դուք, յաղթութեանը, եթէ թշնամիներ գան, ես կարող եմ զիս քարե մը վար”:

Այժմ տեսնենք. թէ ինչ վիճակի մէջ էին Զայի գիծը պահպանող մեր ընկերները: Հաճին և Մակար Զայի գլուխներ գիրքեր բռնած էին, իսկ Մուրատ մի քանի ընկերներով մնացեր էր ջրի ափերը՝ չմողնելու համար, որ թշնամին ջրէն անցնի: Բայց զօրքը յանկարծակի կը յարձակի, այնպէս որ Մուրատ ընկերներով ետ կը քաշւի յարմար գիրք բռնելու. Երբ կը տեսնէ որ յարմար գիրք չկայ, ձայն կուտայ ընկերներուն ետ գառնալ և անմիջապէս կը չպին ձիւնի մէջ և կըսկսին կուիլ: Թշնամու և անոնց մէջակի տարածութիւնը կը լինէր մօտաւորապէս 600 քայլ: Պասիններէն արձակւած առաջին գնդակները գետին կը կլորեն թշնամիներէն մի քանիսը: Հաճին ալ բարի գաղաթէն կրակ կը թափէ թշնամու վրայ՝ այսպէս

թիւլքերու թափը կը կոտրով և անոնք չեն համարձակիր աւելի առաջ գնալ: Իրենց փոքր ուժի գէմ թշնամիների գնդի այսպէս անսպասելի կերպով կասիլը՝ մեծ ոգեստութիւն կը ներշնչէ տղայոց և Մուրատ ընկերներու հետ պար կը բռնէ, ապա երգերով ու կեցցէներով կը շարունակեն կոփեր մինչև ժամը 6-ը: Ժամը 7-ին Տափրքի կողմէն Ընդբանիկն ալ կը հասնի: Ինչպէս սկզբին թիւլքերն էին յանկարծակիի բերած և ետ քշած Մուրատն ու ընկերները, այժմ ալ կարգը մերոնց կուգոյ փոխադարձար թիւլքերուն ընել: Վիացած ուժերով հայերը կը յարձակին թիւլք զինւորներու վրայ և կոտորելով կը հալածնն մինչև Շենըք, ուր տակաւին կ'որոտային թընդամոթները: Վալին, որ բանակի հետ եկած էր անձամբ հրամայելու, տեսներով որ զօրքը յաղթւած կը նահանցէ, ինքն ալ քանդէ վրանները և զօրքերը հաւաքելով Մուշ կը վերագառնայ:

Յաղթութիւնը հայերու կողմն էր: Հայ զինւորներէն մի քանիսի ոգեստութիւնը այն աստիճան էր, որ հակառակ թանձրացող մութին, կ'ուզէին աւելի յառաջ արշաւել՝ բանակի ետ մնացած մասերու վրայ: Ընդբանիկի կարգագրութեամբ բոլորը միասին հաւաքւեցան, վերցուցին Հրայրի և միւս նահատակ ընկերներու մարմինները և եկան Ալիկեկուզան: Հանդիսաւոր կերպով Հրայր թաղւեցաւ Սերոբ-Վլզիւրի մօտ:

Այդ իրիկուն հայ զինւորները առհասարակ վերին աստիճան աննախանձելի գրութեան մէջ էին: Ամբողջ կուի ընթացքին մէջ վերջին աստիճանի ջղային լարւած դրութիւնը, տեղացող կարկուտն ու անձրեւ քաղցածութիւնը՝ յոգնեցուցած էին բոլոր: Այս կուին մէջ մերոնցմէ ինկան Հրայր, Մարտիրոս, Կրպէն, Աղբեցի Գէորգ

Աէլիցի երկու երեխաներ 40-44 տարեկան և պառաւ կին մը: Թշնամիէն սպաննւեցան 800-1000 հոգի, այնպէս որ կոիւներու տեղերը և զօրքի նաշանջի ձամբան ամբողջապէս արիւնով ողողւեցան: Մերոնք գրաւեցին 53 մասդէր 3000 փամփուշտով: Կուին մասնակցող ուժ փաշտ զօրքը այսպէս էր բաժնւած. — Երկու փաշտը կը կուէր 2այի մօտ, իսկ վեց փաշտը՝ 3-4000 քիւրդերու հետ կը յարձակէր Ալիանքի կողմէն: Կոիւը տեսեց արշալյուին՝ ժամը 11-էն սկսած մինչև երեկոյեան ժամը 1-ը (ը. թ.): Թշնամին նոյն օր այրեց Շէնըք և Սէմալ զիւղերը:

### 7. ՄԵՐԿԵՐԻ ԿՐԻՒԼ

Ապրիլ 14-ի առաւօտեան, ժամը 10-ին, 6-700 քիւրդեր և 2-300 զօրքեր յարձակեցան Աէլիէկուզանէն երկու ժամ հեռու գտնուող Մերկեր զիւղի վրայ: Մերոնք այդ օրը զբաղւած էին գատարկ փամփուշտները լցնելով: Մուրատ իր հետ վերցուցած մի քանի զինուորներով գնաց Մերկեր, բաւական կուէլէ յետոյ՝ թշնամին թողուց աւարը ու փախաւ: Այդ օր կոիւը շատ թեթև անցաւ:

Ապրիլ 15-ի առաւօտեան, գէորդ 2.սվուշ իր ընկերներով եկաւ Խշննձորէն: Գէորգը և Խաս զիւղի Փոթորիկ քահանան, երբ նոր կը բացէր արշալյու, բարձրացան Բէրբէրի հովիտի վերև և դիրք բռնեցին՝ ձիշտ այնտեղ, ուր նախորդ օր դիրք էին բռներ թիւրք զինուորները: Քիւրդերը կառավարութենէն նոր ուժ սուանալով երկորդ անգամ փորձեցին Մերկերի վրայ գնալ. մերոնց տեսնելով և թիւրք պահապանների տեղ ընդունելով անոնց՝ կը բարեւն, անոնց բարեի պատասխանը կը լինի գէորդ

2ավուշի գնդակը: Թշնամիներ յանկարծակիի գալով կը կրակին հրացանները. կոիւը կը տեէ երկու ժամ. շուտով կը հեռանան քրդերը՝ իրենց հետ տանելով մէկ սպաննւած և մէկ վիրաւորւած:

### 8. ԽԾԽՆԶՈՐԻ ԿՐԻՒԼ

Ապրիլ 16-ին Խիանքի և Փուսուրի կողմէն եկած էր երկու փաշտ զօրք գոցելու համար Խշննձորի ձամբան, որպէսզի ժողովրդէն ոչ ոք գուրս չգայ զիւղէն գաւառ գնալու համար: Կոիւներու սկիզբը դրւելէն ի վեր՝ փանգի և յարձակման ենթակայ գիւղերը կամաց-կամաց պարտաւորւած էին քաշւիլ գէպի Սասնոյ կեդրոնական մասը՝ գաւառը: Այժմ կարգը եկած էր Խշննձորցիները աեղափոխելու: Խշննձորի մէջ, իրրե քաջ կուողներ կը գտնուէին Մուշեղ, Ապրօն, Լեռն, Մուկուչ և Տէրտէրի տղաները. ասոնք մէկ կողմէն կը կուէին և միւս կողմէն ժողովուրդը կը տեղափոխէին. Թիւրք զօրքին միացած էին նաև Խուլբի բոլոր աշիրէթները: Կոիւը սկսելուն՝ հաւարը հասած էր Տալւորիկ: Ամբատ, որ այդ ժամնակ Տալւորիկ կը գտնէր, չկրնալով իր գիրքերը թողնել, օգնութեան կ'ուղարկէ Հլողինքի Խշնաններին՝ Պալյուն, Գէւոյին և Օսմանին: Ասոնք մի քանի զինուորներով Խշննձոր կը համնին կը բարձրանան Կապլորաքար և կը կուէին զօրքի հետ ճակատ առ ճակատ. իսկ վերևէն ալ ձիւնը առատ կերպով կը թափւի: Երբ Խշննձորի ժողովուրդը կը փոխադրւի և թշնամիները մութի պատճառով կը քաշւին, մեր կարիճներն ալ կը վերադառնան Տալւորիկ: Թշնամիներէն այդ օրը կըսպաննւին օյ հոգի:

Ապրիլ 17-ին՝ Վահան նամակ մը գրած էր Տալւորիկ

Սմբատին, որպէսզի սա ժողովուրդը Կէլիկէռւզան փոխադրէ: Միենոյն ժամանակ թշնամուն դաշտի մէջ զբաղցնելու և չթողնելու համար որ իր ամբողջ ուժերը կեղրոնացնէ Սասնոյ վրայ՝ կը կարգադրէ որ Առաքել և զօղոս հինգ ընկերներով դաշտ գնան այնտեղ ալ կուներ սարքելու: Ասոնք երբ Կոփ կը համանին, կը հանդիպին պալաքցի քրդերու, որոնց հետ  $\frac{1}{2}$  ժամ կուելէն յետոյ՝ կ'անցնին դէպի Դաշտ: Ապրիլ 10-ին պալաքցիներ, Խութի քիւրդեր և Մուսապէկի եղբայր Ղասրմ իր աշխրէթով, ընդամէնը 2000 հոգի, կը յարձակին Կէլիկէռւզանի մի թաղի վրայ, ուր կը կուէր Միիթար: Կոփւը կը տեէ Յժմ: Քրդերը կը կորոնցնեն 8 հոգի և 8 հրացան: Այս անգամ կուողներն էին մասնաւորապէս Աւցի Կարապետ, Եղօ, Զաթօ, շուշնամերկցի Առաքել, Գրգօ, քոփեցի Փուրթօ և քանի մը աղբեցիներ ու Կէլիկէռւզանցիներ:

### 9. Կէլիկի ԿՈՒԻՒՐ

Կառավարութիւնը իր ուժերը աւելի կը կեղրոնացնէր Սասնոյ մէջ. մինչեւ ապրիլի 18-ը՝ 40 հազար զօրք հաւաքեց Սասնոյ շուրջը: Կառավարութիւնը որոշած էր մի վճռական յարձակութով ջնջել սասունցիներու ուժը և լուցնել բողոքի ամէն ձայն: Վասնգը անխուսափելի էր:

Անդրանիկ իր մօտ կը կանչէ բոլոր զինւորները և կը պատրաստէ ապագայ դիմագրութեան ծրագիրը, Կէլիկէռւզանի շուրջը կը նշանակէ դիրքեր, կ'որոշէ խմբապետներ ու անոնց օգնականներ, ցոյց կուտայ թէ ոգ ինչ դիրքի վրայ պէտք է լինի:

Զաթօն, Փուրթօն, Արապիօն և մի քանի աղբեցի

Կորիճներ կը բռնեն Տավրների վերև մի աւերակ վանքի տեղը: Միսիթարի խոռոշ (կէտիկ) կը բռնեն՝ Մակար, Կարապետ, Եղօն: Մճելնի (աղբիւր) գլուխը՝ Հաճին, զինւոր Գրիգոր, Օսէյի Աւէն և Կիրակոս: Կարմիր քարերը՝ Սարդիս և Պաղպար: Տալազարայ զլուխը՝ Մոհացին, Քեաթիպ Մանուկ և Աւէս Մանուկ: Բողնոցներ՝ Միսիթար, Զօնէ Օհան և մի քանի շէնքըցի, սէմալցի ու Կէլիկէռւզանցի կտրիճներ: Քէփրիշէրիփ խան և Աղլէզի քարերը՝ Գէորգ Չափուշ և Անդրանիկ: Քէրբէրի հովիտի բերանը՝ Աւետիս և Արամ, Թաջալներ՝ Տիրացու Օհանէսի գոմը՝ Մուրատ և Կուրազի Քեռին:

Ապրիլ 20-ին պէտք եղաւ ամրացնել նաև հետեւալ գերքերը: — Ամպրների գլուխէն մինչեւ Ծաշկայ-Մուշէն պաշտպանեցին՝ մշեցի Մմբատ և փարկացի Սարգիս: Ծիրինակու արտերը՝ Անդրանիկ, Մուրատ և Աւետիս: Խտանայ Կողմէն մինչեւ Փուշփուշի տակը՝ Գէորգ Չափուշ, Արամ, Մմբատ և մոկացի Գրիգոր:

Կւրաքանչիւր Խմբի մէջ կը գտնւէր 10 կանոնաւոր հրացան, որոնցմէ 3-4-ը մօսին, մնացածները բերդանկա կանոնաւոր հրացաններուն կը միանային և չախմախլիով զինւածներ:

Թշնամին իր թնդանօթները աւելի կը մօտեցնէր և կը զետեղէր մերժոց բռնած դիրքերու դիմաց: Թնդանօթաձգութիւնը երկու օր շարունակւեցաւ: Կուփի միջոցին Հաճին և զինւոր Գրիգոր իրենց համար նշանակած դիրքէն աւելի առաջ անցան և սկսան կուրծք կուրծքի կոփւը: մերոնցմէ 11 հոգի կը վիրաւորւին ու ետ կը քաշւին նշանակած դիրքի մէջ: Թշնամու հրացանները քիչ անգամ կը գործէին, բայց թնդանօթները երբէք չլուցին: մեր դիրքերէն յայտնի չէ ո՞ր մէկի վրայ 32 ոռոմք ար-

ձակւեցաւ. Աէմալի և այս կոիւներուն 15 թնդանօթներ ընդունը 1,500 ռումբ թափեցին հայերու դիրքերուն վրայ:

Կոիւն ու դիմագրութիւնը տեղ մինչև ապրիլի 22-ը: Մերոնց գրամփուշտը սպառւելու մօտ էր, ատոր համար չուզեցին երկար դիմագրութեան մէջ իրենց ամբողջ պաշտը սպառել, մտածելով որ մնացածը աւելի նեղ օրւան համար հարկաւոր պիտի լինի: Ալուծակի մէջ որոշեցին պարապել Աէլիէկուզանը, ուր հաւաքւած էր գիւղի բնակչութիւնը, և Գաշտ իշեցնել ժողովուրդը: Զինւորներէն 100 հոգի, ժողովուրդը հետը վերցուցած՝ ուզեւուցան գէպի Գաշտ: Աէլիէկուզանի շուրջը դիրքերէն շարունակւեց դիմագրութիւնը, մինչև որ ժողովուրդը պարապեցաւ:

Անդրանիկ, Վահան և գէորգ Չափուշ բարձրացան Կընըշէկ՝ այնտեղ շարունակելու կոիւրը: Իսկ Մուրատ, Սմբատ, Գարհատ, Աւետիս և անոնց հետ եղող զինւորները, ընդունը 113 հոգի, ժողովուրդը անցկացնելէ և գէպի Գաշտը ճամբելէ յետոյ, կուզեռուին ուրիշ ճանապարհով մը գէպի Գաշտ: Անոնց միացեր էին նաև Թիւրք զինւորներէն և հոգի, որոնցմէ մէկը՝ մասնաւորապէս լաւ կը կուէր քիւրդերու և զօրքերու գէմ:

#### 10. ՔՈՓԻ ԿՈՒԽԻՐ

Խումբը կը հասնի Ռովասարի տակ Բարձր-Աստւածածնայ աւերակ վանքը, ուղիղ կէսօրին: Սմբատ, դրան վրայ պահպանութիւն ըրած ատեն՝ յանկարծ կը նկատէ, որ Տափրկի կողմէն մեծ բազմութիւն մը կը յառաջանայ, հետադիմակը պարզ ցոյց կուտայ, որ ատոնք թշնամու

զօրքեր էին. իսկ Քոփի կողմէն ալ կըսկսի արշաւել քիւրդերու խումբը: Մեր աղայք երեք կէտերէ դիրքեր կը բռնեն. — Սմբատ և Գրիգոր կը բռնեն Ռովասարի մօտ գտնւող մի գոմ: Գարհատ և Արամ կը յարձակին Քոփի կողմէն եկող թշնամու վրայ իսկ Մուրատ և Եւետիս կը բռնեն Տափրկի կողմը: Կոիւր շատ սաստիկ կը լինի: Մերոնցմէ կըսպաննեւին կուրացի Միսիթար և Համբօն, որոնք մէկ հատիկ էին իրենց եռանդով ու քաջութեամբ, կը վիրաւուին Համզօ, մշեցի Արամ և Խղաթցի Համբարձում: Մերոնց գիրքերը անբաւական կը լինին պաշտպաննելու և թշնամիներուն ետ քշելու, հարկաւոր կը լինի անպատճառ ջուրը անցնիլ և յարձակւիլ անոնց վրայ: Անրջապէս հաղիւ յարմար տեղ մը գտնելով — այնքան յօրդաւատ էր ջուրը — Աւետիս և Հածի գէտօն կը յաջողին անցնիլ միւս ափը: Անոնց կը հետեւին և ուրիշները: Ճուրը անցնողները զիմացի ափէն, իսկ մնացողները այս ափէն՝ թշնամին առջեր ձգած, կըսկսին գնդակահարել: Յանկարծ ետեկի կողմէն կը լսւին հրացաններու. Ճայները Ռովասարի կողմէն եկող խումբ մը սաստուցիներ էին ատոնք, որոնք իրենց հետ ունենալով Աէլիէկուզանի Տէրտէրը՝ օգնութեան կուգային. մերոնք առաջին անգամ չեն կրնար զանոնք ճանչնալ և թշնամիներու տեղ ընդունելով՝ հրացանները կը դարձնեն անոնց վրայ: Կերպով մը կ'իմացւի, որ ատոնք օգնութեան եկողներ են և երբ կը համենին՝ միացած ուժով կըսկսին յառաջ քալել: Տղայք կը վերցնեն Միսիթարի և Համբօյի հրացաններն ու զէնքերը: Տէրտէրը կը հաղորդէ զանոնք և բոլորը միասին ջուրը կը մանեն զիմացի ափը անցնելու: Մութը կը կոմէ. թշնամին թէկ կը քաշւի, բայց մերոնք ալ իրարմէ բաժնւած լինելով՝ չեն կրնար նորէն

իրար գտնել: Աւետիս, որ մի քանի զինւորներով բռնած կը լինի Տափըկի ճանապարհը՝ անդամ մ'ալ չերենար. ուրիշ փոքրիկ խումբ մ'ալ անդիտակցաբար կը բռնէ տարբեր ուղղութիւն մը. խմբի երբորդ և ամենամեծ մասը որ բազկացած կը լինի 70 հոգիէ, կ'որոշէ բարձրանալ կուռթը լեռը և այնտեղէն իջնել Գաշտ: Սմբատ կը պահէ խմբի ետևի մասը:

Սպիտակ կուռթը իր ձիւնապատ և սառցապատ փէշերը կը փուէր խմբի ոտքերուն տակ իսկ լերան կատարներէն փչող կատաղի հիւսիսը իր սարսուռը կը տարածէր խմբի մէջ: Մէկ կողմէն երեք օրիւան քաղցը, միւս կողմէն ցուրտ քամին, որ միայն անխնայ կերպով կը ծեծէր իր առջև գտնւող մարմիններուն, կամաց-կամաց կը քամէր խմբի վերջին ուժերը: Վերջապէս երկու հոգի սառած ու գաղրած՝ ցած կ'իյնան ճանապարհի վրայ. ընկերները կը վերցնեն հրացաններն ու կը շարունակեն քալել: Ամբողջ տաս ժամ լերան վրայ թափառելն յետոյ՝ առաւտեան արշալոյսին, խումբը կը հասնի Սիմ լերան գագաթը՝ Ծիլնկատար: Անոր առջև կը տարածւէր նօսր մշուշով պատած Մշոյ գաշտի ընդարձակ տարածութիւնը: Ցերեկով ցած իջնել՝ կը նշանակէր յայտնապէս վտանգւիլ, որովհետեւ լերան սպիտակ Փօնի վրայ կատարւող շարժումը դիմացէն դիտողի ուշադրութիւնը պիտի հրաւիրէր: Այդ պատճառով, հակառակ լերան կատարի ծայրայեղ սառնամանիքն՝ խումբը կ'որոշէ ցերեկը այնտեղ անցնել, մինչև մթնիլը: Սմբատ և Աէլիէկուզանի Տէրտէրը կ'ուղարկւին Հաւատորիկ հաց բերելու: Ճանապարհին անոնք կը հանդիպին երկու հաւատորիկցիներու, որոնք անոնց քիչ մը ուտելիք տալէ յետոյ, կը յայտնեն, որ գիւղին մէջ կան

30 Թիւլը զինւորներ: Գիւղացիները տեղեկութիւններ ստանալով խմբի կացութեան մասին՝ անմիջապէս գիւղը կը վերագառնան և խմաց կուտան խմբի գալը: Աը պատրաստեն բաւական մեծ պաշար և կ'ուղարկեն խմբին: Մինչ այս, մինչ այն, սառնամանիքէն անկարելի կը լինի խմբին լերան կատարը մնալ, ուստի նա կամաց կամաց, աննկատելի կերպով ցած կ'իջնե, ձորի մը մէջ կրակ կը վառէ և կըսպասէ: Սմբատ և տէրտէր չեռուէն նկատելով բարձրացող ծուխը՝ կը գուշակէն, որ ընկերներն են, և փոխանակ լեռը բարձրանալու, ուր ժամագիր եղած էին և ուր բարձրանալը բոլորպին անկարելի էր գարձեր իրենց համար, իրենց քայլերը կ'ուղղեն գէպի ծուխը: Երբոր ընկերները կը նկատեն զանոնք, հաց, հաց պօ-սալով առաջ կը վազեն. անոնք կերպով մը կը հանդար-տեցնեն իրարանցումի մէջ ընկած ընկերները և յոյս կուտան, որ շուտով կըստանան իրենց ուղածը:

Վերջապէս, քիչ ժամանակ անցնելէ յետոյ, հեռուէն, գիւղի կողմէն կ'երեխն երկու շալակաւորներ: Ատոնք հաց և ուտելիք բերողներն էին: Տղայոց ուրախութիւնը անպատմելի էր... Կը բաժնւի հացը և խումբը չորս օրւայ քաղցածութիւնէ յետոյ՝ ցամաք հացով փառաւոր ձաշ մը կ'ընէ: Բայց սովածները մինակ իրենք չէին... ետեղ կային ուրիշ խմբեր, անոնք ալ հաց չունէին... պէտք էր բաժիններէն մաս մը հաւաքել ու անոնց զըր-կել, որպէսզի քիչ մը ուժ առնեն, գան իրենց հասնին. և տղայքը տւին... Մի քանի ժամեան մէջ պաշարը արգէն պատրաստ՝ կ'ուղարկւի: Ետեղ մնացող տղաները կը հասնին. բայց ի՞նչ... միօրեայ ճամբու տանջանքէն և ցրտէն գրեթէ անձանաչելի և կմախք գարձած:

Խումբը այժմ կը գտնեէր Գաշտին մէջ:

Քոփի կուլին մէջ քիւրդերէն սպաննւեցան 17 և վիրաւուեցան 14 հոգի. իսկ հայերէն գտնւեցաւ մէկ սպաննւած, մէկ ծանր վիրաւորւած, որ քանի մը օրէն մեռաւ և երկու հոգի ալ սպառած:

#### 11. ԿՐՈՒՇԻԿԻ, ԾՈՎԱՍՍՐԻ ԵԽ ԲԵՐԴԱԿԻ ԿՈՒԻՆԵՐԻ

Երբ կուղներու մէկ մեծ մասը ժողովուրդի հետ կ'ուղերւի գէպի դաշտ, Անդրանիկ, Վահան և Գէորգ Զավուշ կը միան Սասուն, աննւաճելի լեռները, շարունակելու անհաւասար կոխւը: Անդրանիկ և Մակար կ'ամրանան Խիսուր քարի վրայ, իսկ Գէօրգ, Խօն կը բռննեն Ախտոր քարի տակը: Ազրիլ 22-էն մինչեւ մայիս 1-ը՝ մեր Խմբապետները լերան արծիւներու նման մի մի քարի վրայ թառած, իրենց տալւորիցի և իշխնձորցի քաջարի զինուրներու հետ՝ կը շարունակեն կոխւը փոխադարձ յաջողութիւններով:

Մայիս 2-ին կոխւը կը փոխադրւի Շովասսարի կողմը. Թշնամին անդամ մ'ալ կը բերէ թնդանօթները և կը փորձէ ըմբռատ լեռներուն գէմ: Բայց անյաջող:

Երբոր մեր զինուրներու խումբը դաշտ կը հանի արդէն, Առաքել, Պօղոս և մի քանի ընկերներ կը զետեղին Բերդակ գիւղին մէջ: Կոտավարութիւնը թշնամուն յատուկ հոսառութեամբ կ'իմանայ անոնց ներկայութիւնը և 300 զօրքով կը պաշարէ գիւղը: Կրտիսի խուզարկութիւն և թալան: Մերոնք գուրս կը նետւին տուներէն և կոխւը կրտիսի: Բերդակցի հայ զինուր մը, Անդրիկ անունով, երբ կը լսէ կուփի ձայնը՝ գուրս կը նետւի իր տնէն և ձակատ առ ձակատ կը պատահի զինուրի մը.

Երկուսն ալ կ'ուղղեն հրացանները իրարու կրծքին, բայց նոյն վայրկեանին վրայ կը հասնի Անգրիկի կինը, կը յարձակի զինուրի վրայ և բուռնցքի հարւածներով կը ծածկէ անոր գլուխը, ակնթարթի մը մէջ կը խլէ հրացանը ձեռքէն ու կրտիսի կոթով հարւածներ իշեցնել անոր կրծքին: Թիւրքը գլուխը կորսնցուցած՝ չի կրնար հաշիւ տալ իր հետ կատարւածի մասին, և տեղացող հարւածներու առջևէն կրնակի վրայ յետ-յետ կը քաշւի ու կը ծիծաղի իր անսահման քաջութեան վրայ, որ ազատւեց կնոջ մը ձեռքէն: Երբ կը տեսնէ, որ հրացանն ա'լ կորսուած է իր համար, կը կանչէ հեռուէն և կ'ըսէ. „Եէտի թանէ ֆիշէնկ վար իշինտէ“ (եօթ հատ փուշտ կայ մէջը):

Հրացանածգութեան՝ ձայնները լսելով՝ Արագէն, Առաքելոց վանքէն և Հաւասարիկէն զօրքեր կուգան օգնութեան: Կոխւը կը տեսէ մինչև մուժ կոխնելը: Մերոնք կը վերցնէն զօրքերէն խլած փամփուշտ, զիտակ և լն. ու կը բարձրանան լեռը: Որովհետեւ խումբը բաւեական մեծ էր գիւղերու մէջ աննկատելի լինելու համար, կը բաժնուի երկու մասի: Մէկ մասը կ'երթայ Մկրտչում՝ Տէրտէրի, Ամրատի, Պօղոսի և Արամի առաջնորդութեամբ:

#### 12. ՄԿՐՄԳՈՄԻ ԿՈՒԻՆԻ

Օր մը գիւղին կը մօտենան խումբ մը թիւրք զօրքեր: Ուէսը անոնց զիմացը կ'ենէ իմանալու համար, թէ ի՞նչ նպատակով է իրենց այցելութիւնը: Նպատակ ։ Խումբ մը թիւրք զօրք հայ գիւղ մը մտնէ, ի՞նչ հարկ կայ նպատակը հարցնել, պէտք է ուտէ, խմէ, թալնէ,

Թափեց, ընտանիքի սրբութիւնը ոտնակոլու ընէ ու անցնի  
երթայ:

Խումբէն կը բաժնեւին քանի մը զօրքեր՝ գիւղը գնա-  
լու և իրիկւան քէֆի համար պատրաստութիւններ տես-  
նելու: Յանկարծ գիւղին մէջ հրացաններ կը պայթին և  
գնդակները կը թռչին գէպի մօտեցողները: Թշնամին  
անմիջապէս գիրքեր կը բռնէ ու կըսկսի պատասխաննել:  
Խմբի ձիերը հրացաններու ձայնէն խրտչելով բոլորն ալ  
կը փախչին և գիւղը կը թափւին: Սմբատ կը վերցնէ  
ձիերէն երկուուր և երկու ընկերի տալով կ'ուղարկէ Կարս՝  
կուի լուրը Մուրատին հաղորդելու: Կուիւր կը տեէ մին-  
չե իրիկուն: Երեկոյեան՝ հեռուէն կը նկատեն առաջացող  
մեծ բազմութիւն մը. երբ բազմութիւնը բաւական կը  
մօտենայ, անոնց մէջէն որոշ կերպով կը լսւին ձայներ՝  
„Կուեցէք տղերք, կուեցէք, հա՛ հասանք“: Ասոնք պա-  
ւագի քիւրդեր էին, որոնք հայերէն խօսելով կ'ուզէին  
սիսալեցնել մերոնք, իրենց օգնութեան եկողներ կարծել  
տալով և յանկարծակի կերպով պաշարելով: Բայց շուտով  
կը պարզէի անոնց կերպէրը: Տղայ.ք կըսկսին անինայ  
կրակ թափել մօտեցողներուն վրայ: Միւս կողմէն ալ  
գիւղէն դուրս կուգայ տղաներէն մաս մը և գիրք կը  
բռնէ գիւղին շրջակաները: Երբ մութը բոլորովին կը  
կոխէ, գիւղի մէջ մնացողներն ալ դուրս կ'ելնեն և բո-  
լորը միասին կը հեռանան գիւղէն: Խումբը կ'որոշէ  
Յունան գնալ որովհետեւ յարմարութիւն չկար Մեղրա-  
գետի հարաւային ափը անցնիւ, ուր աւելի ապահով  
կը լինէին: Այդ գիտաւորութեամբ, երբ Յունանի ճամ-  
բան բռնած ուղիղ արևմուտք կ'երթան՝ յանկարծ գետի  
ափին մօտ աղմուկ մը կը լսեն. դա նորշէնցի հայ մ'էր,  
որ տոփով (Լսոտ) միւս ափը կ'անցնէր իր արտերը աչքէ

անցնելու: Տղայ.ք ձայն կուտան գիւղացուն, որ կուգայ  
և իր տոփով սիրով կը դնէ տղայոց տրամադրութեան  
տակ: Քիչ վերջը խումբը գիմացի ափը կ'անցնի ու կը  
բռնէ Ալվաոինձի Ճամբան:

Մկրագոմի կուտին մէջ թիւրքերէն կըսպաննեւի մէկ  
յիսնապետ և 11 զինւոր. իսկ մերոնցմէ ոչ մէկ կո-  
րուստ:

Այդ միենոյն օրը Խասոգեղի մօտերը կըսպաննեւին  
զօրքերէն երեք հայ հօտաղներ, որոնց մարմինները ժո-  
ղովուրդը կը վերցնէ կը դնէ եկեղեցին: Պատահաբար  
այդ օրը գիւղը կուգայ անգլիական հիւպատոսը և ան-  
ձամբ կը տեսնէ երեք անմեղ զոհերը:

### 13. Դէրբիթի (Աշտիշատ) եի ԿՈՒՐԱՎՈՒԻԻ ԿՈՒԻՆԵՐԸ

Դէրբիթի մէջ կը գտնէին հայ զինւորներէն և հոգի.  
Քիւրդերը կ'իմանան այդ և կ'երթան գիւղացիներէն կը  
պահանջնեն անպայման կերպով: Մերոնք պարտաւորւած  
կը լինին կուելով դուրս քշել զանոնք գիւղէն: Մութը  
կոխնելուն երբ կը հեռանան, ճանապարհին կը հանդի-  
պին քեռիին, որ կուի ձայնն առած՝ Կուրավուէն օգնու-  
թեան կուգար: Հետեւեալ օր քիւրդերը կը փորձեն  
երէկւան կուին վրէժը անդէն և անպաշտպան գիւղացի-  
ներէն լուծել, կը յարձակին գիւղին վրայ և կըսկսին  
թալնել կըսպաննեն նաև ութ հայեր:

Քեռին նորէն կը վերագառնայ Կուրավու: Բայց այն-  
տեղ նկատելով, որ չպիտի կրնայ ապահով լինի կառա-  
գարութեան և քիւրդերու հետապնդումներէն՝ գիւղա-  
ցիներու խնդրանքով իր համար կը փնտուէ ուրիշ աւելի

յարմար տեղ մը: Մուլսաս գետի ամին սարքել կուտայ  
գետնափոր մը և հօն կը մնայ մի ժամանակ իր վեց  
ընկերներու հետ. ո՞չ ոք չէր զիտեր Քեռիի նոր թա-  
գաստավայրի մասին՝ բացի գիւղէն հաց լեռողէն: Մի օր  
երբ դուրս գտնւած ընկերներէն մէկը կ'ուղէ ներս  
մտնել՝ կը նկատեի թիւրք զինւորներէ: Թիւրքերը կու-  
գան գետին ափը, ուր կաշխատի եղեր իր արտին մէջ  
գիւղացի մը այդ արտին բոլորովին մօտ մի տեղ գրւած  
կը լլայ ցաք, վեր կը վերցնեն այդ ցաքը ու տակը կը  
տեսնեն գետնափոր մը: Գետնափորի եղերքին զինւորներ  
կ'երեին թէ չէ ներսէն յանկարծ կ'արձակւին միանգա-  
մէն եօթն հրացաններ. զօրքերը կը պաշարեն գետնա-  
փորի անցքը և կըսկսին գնդակներ տեղալ ներս: Այս-  
տեղ կըսպաննեի քեռին իր վեց ընկերներով: Թիւրքերը  
կը վերադառնան գիւղը, և կարծես սիրտ առած իրենց  
թափած արիւնէն՝ կըսկսին համարձակապէս ծեծել, հայ-  
հոյել և թալնել գիւղացիները, „Խընդըր կեավուր, ֆէ-  
տայի սաքանեա պիլի՞րսիկ“ (խոզ հայեր, ֆէտայի պա-  
հել կ'իմանաքը), ըսելով:

#### 14. ԱԲՍԴԱՆԱՅ ԵՒ ԳՈՄԵՐԻ ԿՌԻՒՆԵՐԻ

Վահան երեք զինւորներով քաշւեր եր Աբազանայ  
սար: Անդրանիկ նամակ կը զրէ գէորգ Զավուշին, որ  
Վահանը վերցնէ ու դաշտ բերէ: Գէորգ Զավուշ կ'ու-  
շարկէ իրեններէ երկու հոգի՝ Վահանը իր մօտ բե-  
րելու, որպէսզի միասին ուղևորւին դաշտ: Տղաները կու-  
գան և Վահանին կը յանձնեն գէորգ Զավուշի նամակը:  
Վահանը կ'որոշէ տեղ մը, ուր նամակաբերներ գիշե-

րանց կրակ պիտի վառէին, որպէսզի ինքը այդ նշանը  
աեսնելով գար և անսնց միանար: Կամակաբերներ կրակը  
կը վառեն, իրենց տրւած հրահանգին համաձայն, բայց  
կրակը կը վառւի ամբողջ գիշեր զուր տեղ. առաւօտեան  
մօտ միայն Վահան կը համնի ժամագրավայրը, երբ ար-  
դէն լցուր բացւած էր: Գիմացի բլուրներէ զօրքերը կը  
նկատեն զանոնք ու կը հետեւին մերժնք պարտաւորւած  
կը լինին կուլու բայց կուի մէջ կ'իյնաց Վահանը. կըս-  
պաննեւի նաև ընկեր մը միւսները վերցնելով զէնքերը և  
Վահանի պայուսակը կը հեռանան:

Վահանի մահան լուրը հանելուն՝ գէորգ Զավուշ  
ինքը մինակ կ'երթայ Անդրանիկի մօտ: Կառավարու-  
թիւնը, որ ամենախիստ կերպով կը հետեւ Անդրանիկի  
հետքը գտնելու համար, օր մը կ'իմանայ որ նա գոմեր  
կը գտնւի. անմիջապէս պաշարել կուտայ գիւղը քիւրգե-  
րով ու զօրքերով: Անդրանիկ կը զիմագրէ շատ յաջող  
կերպով. կուի մէջ կըսպաննեւին 7 քիւրդ և մի հայ:  
Մուժը կոխելուն կը քաշւի գէպի լեռ:

#### 15. ՏԵՐՔՎԱՆՅԻ, ԱՐԱՂԻ ԵՒ ԲԵՐԳԱԿԻ ԿՌԻՒՆԵՐԻ

Կառավարութեան հետապնդումները տեղի պէտք է  
տային նորանոր կոխեներու: Անգամ մը մերժնցմէ խումբ մը  
զինւորներ կը գտնւէին Տէրքէվանք. թիւրքեր և քիւր-  
գեր իմանալով այդ՝ կը պաշարեն գիւղը. նորէն կըսկսի  
կոխւ, նորէն կը վազէ արիւն: Առաքելոց վանքէն, բեր-  
գակէն և շրջականներէն կուի տեղը կը թափին զօրքեր  
ու քիւրգեր. մերժնք գիւղին մէջ բաւական կուելէ վերջ  
կը քաշւին Շարան քարեր, ուր կը շարունակւի հրա-

ցանաձգութիւնը: Թշնամիներէն կըսպաննւի Ան Հոգի: Մեր տղայոց քաշւելէն վերջ սակայն սարսափելի կ'ըւլ-լոյ գիւղացիներու դրութիւնը. թբբական բարբարոսութիւնը անխնայ կերպով կ'աւերէ ամբողջ գիւղը, կըսպաննւին ՅՅ Հոգի, կը զիրաւորւին շատեր. իսկ գիւղացու կայքը ամբողջապէս կը թալնւի: Հրացանաձգութեան ձայնէն Մուշէն կոտորածի տեղը կը համնին ֆրանսական և անգլիական հիւպատոսները ու ականատես կը լինին կոտորածին ու թալանին, որոնք սակայն անմիջապէս կը գաղրին:

Մի անգամ՝ հայ զինորներէն խումբ մը կ'իջնէ Արազի մօտերը և գիւղ կ'ուղարկէ զինորներէն մէկը՝ հաց բերելու. գիւղէն թիւբերը կը նկատեն հաց փոխադրողը ու կը հետեւն անոր մինչեւ խումբի իջած վայրը. տեղի կ'ունենայ փարբիկ ընդհարում մը. մերոնք կը քաշւին գէպի բերդակ. հրացանի ձայնէն Հաւատորիկի զօրբերը շուտով կռւի տեղը կը համնին ու կը միանան Արազի թիւբերուն: Բերդակի մօտ՝ երբ մերօնց կը համնին, անյաջող ընդհարումէ մը յետոյ՝ գիւղը կը մտնին և ինչ որ չեն կրցեր ընել ֆէղայիներուն, կ'ըսնեն խաղաղ գիւղացուն. գուները կոտրելէն, շատերը լաւ մը ծեծելէն ու թալնելէն յետոյ կը մեկնին:

#### 16. ԳՈՄՍԻ ԿՐԻՒՐ

Մուրատ Դաշտ իջնելէ յետոյ՝ երկար չմնաց այնտեղ. քանի մը ընկերներով Շամը գնաց փամփուշտ փոխադրելու, որովհետեւ փամփուշտի պաշար՝ դրեթէ սպառւած էր: Ճամբան տեղ մը ընդհարում կը պատահի զօրբերու և իրենց միջն, բայց այդ արգելք չեղաւ, որ անոնք

յաջողութեամբ Դաշտ երթային ու նորէն վերադառնային Գաշտէն:

Գոմս գիւղը կը գտնեւէր թիւբը աղա մը, Հաճի-Ելի անունով, որ գիւղացիները կողոպտելով կարողացեր էր մեծ հարստութիւն դիզել և գիւղացիներու վրայ սանձարձակ գործ կը դնէր ամէն տեսակ բոնութիւն: Օր մը գիւղէն կին մը արտ գացեր էր հասկաքաղ ընելու և վերագարձեր էր գիւղ աղան երբ կը նկատէ այդ՝ կնոջ վրայ կը յարձակի, կը ծեծէ ու կը հայհոյէ, թէ ինչո՞ւ առանց հրամանի իր արտեն հասկաքաղ ըրած էր. ապա կը վերցնէ հասկերն և ցորենը կը ցրւէ ու կը փացնէ: Ամբողջ օրը արեի առաջ տաքութենէն տապակւիլ. ինչո՞ւ համար, — հաւաքելու այն՝ որ երկնքի թռչուններուն իսկ չէ արգիւած և որ իգուր պիտի փանար արտին մէջ. — արիւնքբանքով ձեռք բերած քանի մը հատիկներու համար ծեծւիլ ու անխնայ անպատւիլ... Անգութ բաղդ, որ ոչ մի ժամանակ չգիւտես ինայել թշւառին...

Խեղճ կինը գէպի երկնքի կը տարածէ ձեռքերը և վշտագին կը կանչէ երկնքի երեսին. „Ով Աստւած, եթէ դու մեր պապերի Աստւածն ես, մինչեւ իրիկուն այս անօրէնին դատը կը տեսնես:“

Եւ պապերի Աստւածը ուղարկեց գատաւորներ անօրէնին համար. գատաեց անիկա ամենաարդար գատառ:

Մի քանի օրէ իվեր գիւղին մէջ պաշւած էին մեր զինորներէն մի քանիները: Այդ օրը՝ երբ տեղի ունեցաւ ախուր միջադէպը, իրիւան կողմ զինորներէն զօղս դուրս կ'ենէ գիւղի մէջ ման գալու. աղան նկատելով անոր օտարութի գէմքը, կը մօտենայ և կըսկի հարցուփորձել զայն բայց ատով ալ չբաւականանալով կ'ուզէ իր աղայութիւնը ցոյց տալ՝ անպատւելով ու հայհոյելով

Պօղոս կը պատասխանէ միւնոյն ձեռփ, կը յարձակի վրան ու կ'արձակէ իր ատրճանակը. քաջ թիւբը կերպով մը կ'ազատի Պօղոսի ձեռքէն և կը փախչի: Աղան կը զինւի անմիջապէս, հետը կ'առնէ նաև երկու ընկեր և կուգայ ուղիղ այն տան դիմաց դիրք բոնելու, ուր մերոնք կը գտնւէն: Մերոնցմէ մաս մը կը բաժնւի և երբ աղան իր ընկերներով տղայօց դիրքի վրայ գնդակներ արձակելով զբաղւած էր, մերոնք կ'երթան հակառակ կողմէն և կ'ուղղեն հրացանները ուղիղ անոնց մէջքին: Երեք հրացաններ կը պարպւին և երեք թշնամիներն ալ իրարու վրայ կը դորւին: Այդ օր գիւղին մէջ թշնամիներէն կը սպաննէնին ընդամէնը հինգ հողի: Տղայք 1 ½ ժամ կու կուտէն յետոյ՝ կը վերցնեն սպանւածներու գէնքերը, կ'այրեն անոնց տները ու կը հեռանան: Ըրջակայ գիւղերէն քիւրգեր և թիւրգեր կ'ածապարեն օգնութեան, բայց ֆէգայու մօնիները ժամանակ չեն տար անոնց աւելի առաջանալու (յուլիս 8):

Հաճի-Ալի աղայի սպանութեան լուրը շուտով տարածւեցաւ ամրող դաշտի մէջ. շատ գիւղերէ նման աղաներ սարսափահար Առուշ թափւեցան, թողնելով իրենց քէօշկերը, կառավարութենէն պաշտպանութիւն խնդրելու համար:

#### 17. ԿՈՒՐԱՎԱՅԻ ԿՈՒԽՆԵՐԻ

Գատարկ է Սասուն. Լերան գաղանները կ'այցելեն այն բնակութիւնները, ուր մի ժամանակ սասունցի խաղաղ ընտանիքը կը ծւարէր, տուներու փոխարէն աւերակներու կոյտեր միայն կ'երկն: Ֆիր և առոյ սասունցու փոխարէն քաղցածը ու մերկանդամ կմակներ

կը շրջին Աշոյ փողոցները: Իրաւունքի ձայնը չարաշար խեղդող բոնութիւնը անզգամօրէն քթի տակէն կը ծիծաղի, միայն մի հոգ ունի, որ կը ծանրանայ անոր սրտի վրայ, այդ հոգէն ալ կ'ազատաւի, եթէ Անդրանիկի գլուխը ձեռք բերէ: Հրէշ, որ մի կողմէն գիտէ արեան մէջ խեղդել մարդկային իրաւունքի և պատութեան ձայնը և միւս կողմէ սարկութեան, ամենազարելի գերութեան շղթաներով կաշկանդել իր ճակարի քրտինքով ապրող ժողովր ի մը աշխատող ձեռները: Ե՞րբ կ'իշնան շղթաները այդ ձեռքերէ, ե՞րբ կը ծլի ազատութեան բողբոջը արիւնով ողողւած հողի մէջ: Այսպիսի մաքեր կ'անցնէին գլուխ, այսպիսի հրացեր կը ծագէին այնտեղ, երբ հայ ֆէգային հրացանի փողին կրթնած՝ երեկւան անցքերը կը յիշէր: Վրէժ կը պահանջէին մեզմէ. լուծեցինք այդ վրէժը, արդարացուցինք այնքան յայսերը: Բայց թշնամին անողորմ է, նա միշտ պարտական կը թողու քեզ կ'ուղեն հին վրէժը լուծւած համարել: Յիշէ երէկը, գեռ տաք են Հրայրի և ընկերներու գիտները, գեռ արեան մէջ կը լողան վաշնանի և բազում սասունցիներու մարմինները և տոտնք լողորը վրէժ կ'աղաղակն: վրէժ, այս, անմահ հոգիներ, մենք ողջ մնացողներս ձեզ կը միանենք շուտով... Կը սթափի հայ ֆէգան, ձեռք կ'առնէ հրացանը, տենդոս նայւածքով կը քննէ պատրօնտաշը, քանի մը փամիտւշտ միայն թացեր է այնտեղ... ի՞նչ արած, կը մըմնջէ ինքնիրեն, աւելին չունիմ... .

Անդրանիկ և Գէորգ Զավուշ նորէն Սասուն գնացեր էին: Յուլիս 10-ին անոնք կը վերագառնան անիէ և բերդակ գիւղին մէջ ընկերներ կը գտնեն: Այնտեղ Անդրանիկ կ'որոշէ նախ քան զէնք փար դնելը, գործածել վերջին փամիտւշտ կառավարութեան մի անդամ ալ մի

լաւ հարւած տալու համար: Յուղիսի 16-ին Անդրանիկ մօտ 34 հոգիէ բաղկացած խմբով կուրավա գնաց: Խմբի համար նշանակւեցան նոր տասնապետներ և անոնց օգնականներ: Գեռ մէկ օր էր որ խումբը դիւզը մտեր էր: Հետեւեալ օրը ժամը 5-ին լուր կուտան, որ 80-ի չափ զօրք դիւզը կուգայ: Գիւղապետը կը դիմաւորէ անոնց՝ գերեզմանոցը կը տանի, ուր բոլորն ալ կըստանան ուտելիք: Բայց այդքանով անոնք չեն բաւականանար, կը մտնեն գիւզը և կըսկսին աներէ բռնի պահանջներ ընել. զօրքերէն մէկը կուզէ լրաբար վարւիլ հայ կնոջ մը պատւի հետ. կինը ահարեկած ձիչ մը կ'արձակէ ու կը փախչի: Անդրանիկ լաւ կը դիւտէ անցած դարձածը: Խումբը չորս մասի էր բաժնւած. զօրքերէն մէկը կը մտենայ այն գրան, ուր Առաքելի տասնեակը կը զըտնըւէր. կը ծեծէ զուրը, տղաները կ'ուզեն զուրս նետւիլ բայց Առաքել տակաւին կըսպասեցնէ. գրան արանքներէն զինւորը լաւ կերպով կը նկատէ ներս եղողները և „Աէլին, պուրատ ֆէտայի վար“ կանչելով՝ ձայն կուտայ միւս ընկերներուն: Շուտով կը հաւաքւին թիւրք զինւորները ու կը պաշարեն տունը: Անդրանիկ միւս երեք խմբերը պատրաստ կը պահէ, բայց քիչ մը ևս կըսպասէ, որ զօրքերը աւելի հաւաքւին, որպէսզի իրենց գնդակներն ալ առատ հունձ ընեն: Յանկարծ երեք կողմերէ կը պայթին հարցաները, թիւրքերը կ'իյնան դիսկ դիսկի վրայ. Խուճապը կըսկսի. մի մասը հազիւ կը կարողանայ դիւզի աթարներու կոյտերու ետե և գերեզմանոցին մէջ գերք բռնել: Մերոնք՝ „վրէ՛՛ Սեգրաքի, Սարցի, Քեռիի, վրէ՛՛ կանչելով կը թոշին անոնց ետեէն: Գէորգ Զավուշ և Մուրատ կ'արշաւեն դէպի գերեզմանատունը, անոնց ետեէն կը վազեն դիւզը գտնւող թիւր-

քերու մէկ մասը, երկու կող և ալ կըսկսի կատաղի կոկւ մը, զրեթէ կուրծք առ կուրծք: Ալ հասնին շուտով նըւրատ, խօն, Պօղոս, Աստուր, զօրքերու դիսկներով կը ծածկի գերեզմանատունը, ողջ մնացողները կերպով մը կ'ապատեն իրենց գլուխը: Խսկ զօրապետը՝ որ մի բոպէ առաջ խրոխա հրամաններ կ'արձակէր, այժմ սպիտակ երևարիչը վիզը փաթթած այնպէս կը փախչէր, որ որսկան շունը չպիտի կընար անշուշտ ետեէն հասնիլ:

Երբ զիւզը բոլորովին պարպւած էր թիւրքերէն, Անդրանիկ զիրքերով կ'ամրացնէ զիւզը: Եկեղեցու շէնքը զիւզի աներէն ամենաբարձրը լինելով, անօր կտուրը զիրքեր շինել կուտայ: Եկեղեցու զանգակները կըսկսին հնչել շրջակայ զիւզերուն իմաց տալու կուտի մասին: Խսօն, Սմբատ և Պօղոս բռներ էին զիւզի հարաւային կողմը, Ակրօն և Հասրաթմ՝ արևելեան կողմ, Առաքել, Վւենիս, Վէշտահն՝ հիւսիսային կողմ, իսկ արևմտեան կողմ՝ եկեղեցու կտուրի զիրքերը՝ Յոգհաննէս, Վըրամ, Աստուր և ուրիշ չորս ընկերներ: Աննկարազրելի է մերոնց ոգեգարութիւնը, մէկը կ'երգէր, միւսները կը պարէին և այսպէս ոգեգարիչ ուրախութիւն կը տիրէր զիրքերու վրայ: Քիչ մը յետոյ կուգայ Էլոյ-պէյ 60-70 ձիւարներու զլուխ անցած: Մեր զիրքերէն մեկնոց մի շարաձմի զնդակ վար կը զլորէ տաաջին ձիւորը, ձին կը փախչի և գիւզը կուգայ: Այսպէս կը կատարեն յեղափոխականները պատւզ և ընդունելութեան պարաբը: Շուտով հաւաքի կը հասնին Ավրայէն, Առլուխէն, Մատնավերէն և ուրիշ զիւզերէ շատ մը թիւրքեր ու չէրքէզներ: Կոիւը կը շարունակէր, զանգակները կը հընչէին, զրօշակը կը ծածանեէր:

Անդրանիկ կ'ուզարիէ Մուրատը, բոլոր զիրքերուն

իմաց տալու, որ մուլը կոխելուն ժամը կէսին բոլորը կազմ ու պատրաստ սպասեն սուլիչի ձայնին՝ հաւաքւելու Մուրատ գետի տիլը: Արոշւած ժամուն խումբը կը գըտնըսի այնտեղ և գիշերւան լոռութեան մէջ կ'անցնի ջրէն ու կը հեռանայ: Գիւղի փողոցներէն անցնելու ատեն տղայք կը նկատեն տան մը սեմին վրայ ընկած երեխայ մը, զայն հետերնին կը վերցնեն ու ճանապարհի վրայ գտնեող գիւղ մը կը յանձնեն ինսամելու համար: Տղայոց մեկնելէն յետոյ, թշնամիները բաւական կը շարունակեն հրացանաձգութիւնը. Մշց կողմէն ալ ճամբայ ընկած կը լինի մի նոր գունդ երեք թնդանօթներով դէպի կուրավու:

Կուրավայի հրդեհման ժամանակ, երբ բնակիչները սարսափահար կը փախչէին դէպի Ախշան, այնտեղի միւտիրը գուրս կը փոնտէ զանոնք ու չընդունիր զիւղին մէջ սասր վրայ ժողովուրդը և հայ զինորներէն չորս հոգի կը յարձակին միւտիրի և ժամտարմներու վրայ և լու մը կը ծեծեն զանոնք:

#### 18. ՇէՅն-ԻԻՍՈՒԹԻՒ ԵՒ ՇԱՄԻՐԱՄԻ ԿԱՒԻՆԵՐԸ

Յուլիս 17-ին նոր կոիւ մը կըսկսի Շէյն-Իւսութ գիւղին մէջ: Երբ զօրքերը կ'ուզեն գիւղին վրայ յարձակւիլ կողովտելու համար, մի քանի Ախշանցի կարիճ հայեր և տեղացիներ, հրացանը ձեռք՝ գուրս կուգան գիւղը պաշտպանելու: Գիմագրութիւնը շատ յաջող կ'անցնի մինչև կէսօր: Բայց կէսօրէն վերջ թշնամին իր ուժերը շատցնելով՝ աւելի ամուր կը պաշարէ գիւղը: Կուողները կը քաշւին եկեղեցու զլուխ և այնտեղէն կը

շարունակեն կոիւը. աւելի վերջ պարտաւորւած կը լինին եկեղեցիի մէջ պաշտպանւելով՝ շարունակել գիմագրութիւնը, որը կը տեսէ սակայն մինչեւ ժամը Զ. փամիրուշի պաշարը վերջացած լինելով կը դադրեցնեն գիմագրութիւնը: Թշնամին խոտեր բերելով կ'այրէ եկեղեցին, ինչպէս և մէջը ապաստանողները, թւով 42 հոգի:

Այս կոիւներէն յետոյ Գաշաի մէջ բոլորովին կը դադրի երթեւեկութիւնը. թիւքքերը չեն համարձակիր գուրս գալ ֆէդայու աչէն, իսկ հայերը գուրս չեն երեար, վախնալով որ մի գուցէ թիւքքերու վրէժիլնդրութեան ենթարկւին: Կառավարութիւնը ամենախստ միջոցներ ձեռք առած էր ֆէդայիները ճանկը ձգելու: Բաղեշի կուսակալ և ֆէրիք պէջ շուարած մնացեր էին ըսելով. „Եարար Ալլահ, նէրէ կէթաի շու Անդրանիկ“ — Ո՞վ Աստւած, արդեօք ո՞ւր գնաց այս Անդրանիկ — և 4000 սոկի կը խոսանային անոր, ով զլուխը բերէ:

Կառավարութեան հետապնդումը աւելի քան երբ և է խստացած, իսկ մերժնց ուղմանթերքի պաշարը բոլորովին սպառւած էր. այլևս անկարելի էր Անդրանիկի համար սպասել և կոիւը շարունակել: Ամէն անգամ որ կոիւ կը պատահէր, կուելէն յետոյ կ'արձակէին զինուորներէն մի քանիսը և կը վերցնէին անսնց հրացանները, որոնք այլևս անպէտք կը գառնային փամփուշակութեան պատճառով: Այսպէս կուողներու թիւը կը սահմանափակւէր օրէ օր: Անդրանիկ հաւաքելով իր վերջին զինուորները, կը հեռանայ գէպի Ախլաթ և օր մը կը պատսպարւի Շամիրամ գիւղին մէջ: Շարաթներու և ամիսներու շարունակական լարւած դրութիւնը, օրերով քաղցածութիւնն ու անքնութիւնը սպառած էին մեր մի բուռն հերոսներու կենսական ու-

ժերը, անհրաժեշտ էր քիչ մը հանգստանալ, կազդուր-  
ւիլ: Հանգստանալ.. Բայց այլ կերպ կը անօրինէ յեղա-  
փոխականի Աստվածը:

Ածվակի ազա՝ Ելի պէկին իմաց կուտան, որ Արտ-  
Վզբւրի մատնիչները կախող Աեպուհը ընկերներով եկեր  
է Շամիրամ: Նա առանց իմանալու որ Անդրանիկն ալ  
եկած է, մատնիչներու վրէմքը լուծելու համար, կը վեր-  
ցընէ հետք 150 թիւրը զինւորներ ու կը զիմէ զէպի  
Շամիրամ, Ալլահի յաջողութեամբ և Սուլթանի շնոր-  
հիւ բոնելու Աեպուհը: Երբ Ելի պէկի լուրը կը հասնի  
Շամիրամ՝ անմիջապէս մերոնք կը պատրաստին կռւի.  
Աստուր, Սօղոն և Փաքրիկ Պետրոս կը փակեն Ելի պէկի  
զիմաց և զայն իրեններուն հետ գնդակներու առջն  
ձգած՝ կը հանեն Կէմրութ լերան թերու վրայ: Եկե-  
ղեցու կտուրին վրայ և զիւղի չորս կողմը կը պատրաստ-  
ւին գիրքեր, զիւղի հիւսիսյին կողմը, բլուրներու վրայ,  
ուր կան հին բերդի աւերակներ, զիրք կը բոնէ Գէորգ  
Զափուշ 10-11 ընկերներով, Մուրատ կը բոնէ երկրորդ  
դիրք, Անդրանիկը՝ երրորդ, իսկ Աեպուհը՝ չորրորդ: Եկե-  
ղեցու կտուրը կը բարձրանան Սօղոն, Օհանէս, Եզօն և  
մի քանի ընկերներ: Միբատ և Մօսոն բոնած էին չուրի  
վերև, որպէսզի թշնամիներ չկարգանային օգտւիլ ջրէն:  
Դրօշակը կը ծածանեւէր:

Կախ քան կոխւ սկսիլը՝ Ամբատ զիւղէն կը հաւաքէ  
ուտելու պաշար բոլոր կուժերը կը հաւաքէ, ջրով կը  
լեցնէ և կանանց ու աղջիկներու ուսերով գիրքերը կը  
փոխազրէ: մասնաւորապէս աչքի կ'իյնար այս վերջիննե-  
րու ոգեռութ տրամադրութիւնը: մի կողմէն արագ փո-  
խադրութիւն կ'ընէին, միւս կողմէն ասկէ անկէ ձայն  
կուտային: „Գէ՛, աղէրը, կուէք, ձեր հոգուն մատաղ,

մէկ էս քրդուն, Ելի պէկին լաւ խրատ տւէք, որ կեանքի  
մէջ չմոռնայ “: Ամէն կողմերէ օգնութեան հասնող թիւր-  
քերու և քիւրգերու բազմութիւնը գնալով կ'աճէր, սա-  
լավաթ կարգալով առաջ կը խաղար: Թշնամիներ գլխա-  
ւորապէս իրենց ուշագրութիւնը գարձուցած էին ջրի  
վրայ, ուր Ամբատ կը կռւէր ընկերներով: Կոիւը հետ-  
զէտէ տենդային կը դառնար. Ամբատ որոշեր էր մինչև  
վերջին շունչ ջուրը պաշտպանել, որովհետեւ Ոթէ թշնա-  
միներ Խլէին ջուրը, մերոնք պարտաւորւած՝ պիտի չկա-  
րողանային ամուռ մնալ զիրքերու մէջ և զիւղը շուտով  
պիտի յանձնէին: Թշնամին գրոհ կուտայ մի քանի ան-  
գամ, բայց ամէն անգամ ալ կը հանդիպի ուժեղ զի-  
մադրութեան ու ետ կ'ընկրկի. կատաղի կռւի միջոցին  
Ամբատ կը կորանցնէ ընկերներէն երկուքը: Կոիւը ոչ  
նւազ սաստիկ կը լինի նաև միւս զիրքերու մէջ, ուր շա-  
րունակ կը թափէին թշնամիներու զիակները: Խրիկւան  
ժամը մէկին մերոնք կը պայթեցնեն ոռումք մը. թշնա-  
միները անոր ձայնը կը լսեն և „Բաղէշէն օգնութիւն է  
եկեր, թնդանօթ է եկեր“ ըսելով իրար կը խրախուսեն  
ու նորէն առաջ կը նետւին: բոպէ մը կռւիւը նոր թափ  
կըստանայ, բայց քիչ վերջ հետզէտէ կըսկսին մեզմա-  
նալ հրացանի ձայները ու վերջապէս կը լսեն: Թշնամի-  
ները կը քաշւին ամբողջովին՝ կռւի տեղը թողնելով 70  
սպանւած: Մերոնցմէ սպանւեցաւ Փոքրիկ Պետրոսը և  
և վիրաւորւեցան ուրիշ մի քանիսը:

19. ԱՂԹԱՄԱՐԻ ԵՒ ՎԱՆԻ ԿԹԻՒՆԵՐԻ

Խումբը գիշերւընէ կը մեկնի գէպի Գառավան, չո՞ւ կը բոնէ քիւրդերու երկու նաւեր և կ'ուզեղուի գէպի Աղթամար, Ճանապարհորդութիւնը կը տեէ երկու օր: Այդ երկու օրւայ ընթացքի մէջ խմբի ուստելիքն եղած է երեք պարկ սիսեռ, որ կը գտնելը նաւեն մէջ, տափակին Աղթամար չհասած՝ խումբը գուրս կուզոյ Տէվե Պայուն ու քիչ մը կը հանգստանայ: Այդտեղ կը բոնեն նաև մի ուրիշ նաւ, որուն մէջ կը գտնելին մի քանի քիւրդեր, հետեւեալ օր խումբը հեծած երեք նաւերու վրայ՝ կը հասնի Աղթամար: Հո՞ն կըսպասեն եօթն օր: Գէորգ Զավուշ նորէն յետ կը գտունայ գէպի Գաշու: (օգոստոս 5):

Երբ կտուվարութիւնը կ'իմանայ, որ յեղափոխականներ կը գտնելին Աղթամարի մէջ, նաւերով զօրքեր ու թնդանօթներ կ'ուզարկէ. կուսակալ և երքեանը-հարպ մակյանով առաջ ընկած՝ կզզին ոմբակոծելու հրահանդ ներ կուտան: Քէդայինները անգամ մ'ալ կը բարձրացնեն գրօշակը, որ իրենց այնքան կուներուն վկայ էր եղած և գնդակներ կը տեղան նաւերուն վրայ. կոիւը կը տեէ երկու օր: Թշնամին կ'արձակէ 45 թնգանիօթ, անոր նպատակն էր վնասել գլխաւորապէս նաւերը, որպէսզի յեղափոխականներու աղատութեան յայսը կարէ. բայց մերոնք նաւերը քշեր էին ծովեղերքի խորշերու մէջ և կարմիր կուլապներով (թաղիք) ծածկեր էին, այնպէս որ անոնք ժայռերու մէջ աննկատելի կը մնային թշնամիէն: Անդրանիկ լաւ միջոց էր գտէր թշնամու հեռաւորութիւնը չափելու և ատոր համաձայն հրացանները ուղղելու: Թընդանօթի բերնէն ծուխ բարձրանալէ մինչև ձայնի լսելը

կը համրէր, եթէ ձայնը կը լսելը մինչև 40 համրելը, կը նշանակէր, որ թշնամին կը գտնելի 1000 քայլի վրայ, եթէ ձայնը կը լսելը մինչև 17 համրելը, կը նշանակէր, որ թշնամին կը գտնելը 1700 քայլի վրայ, և այսպէս կզզիէն արձակւած գնդակները երբէք չէին վրիպեր նպատակէն:

Երբ կզզին մէջ ուտելու պաշարը վերջացաւ — և պէտք է ըսել որ կաթողիկոսական տեղապահը այնպէս էր սարքեր, որ կզզին ապաստանողները աւելի երկար մնալու համար պաշար չունենային՝ նախորդ օրերը գուրս տեղափոխելով վանքի մէջ գտնւած ալիւրը — խումբը կզզին մէջ թողնելով երկու գրօշակներ՝ գուրս եկաւ: Կանգուն մնացած գրօշակները երկու օր ալ կը խարեն թշնամիները, որոնք ամենայն եւսանդով կը շարունակեն ոմբակոծել կզզին, կարծելով թէ Փէդայիները տակաւին ներսն են, մինչև որ ներսը եղող միաբանութիւնը նշաններով իմաց կուտայ գուրսը՝ ոչ ոք չլինելուն համար: Այդ տաեն թիւբը զինւոր մը ամենայն քաջութեամբ նաւ կը մանէ՝ առաջինը կզզին գնալու համար, հետեւեալ օր իրեւ վարձատրութիւն իր „անվախ անձնւիրութեան“ կըսանեայ տասնապետի տափիճան... .

Վանայ մէջ խումբը երկու անգամ կը նկատեի. տուշին անգամ անփորձ կ'անցնի, երկրորդ անգամ, երբ գիշերը կը տեղափոխերէ, գիշերապահ զինւորներու կը հանդիպի: Թիւբը երբ կը հետեւն և կը պահանջեն անձնատուր լինիւ, բայց երբ երենցմէ մէկը կըսպանեի և մի ուրիշն ալ կը վիրաւորէի՝ կը թողնեն ու կը փախչին: Հետեւեալ օր սարսափ կը տիրէ ամբողջ քաղաքի մէջ. թիւբը երբ կը յարձակւին հայերու վրայ և տեղացիներէն

կըսպանւին մօս 60 հոգի. կայրեն մի տուն: խանութեալ ամբողջապէս կը փակւին ու մի քանի օր երթեւ կութիւնը կը դադրի:

20. ԿԾՎԱԿԻ ԿԻՒԻՆԵՐՈՅ

Գէորգ Զավուշ՝ Ազմամարէն գուրս գալէն յետոյ.  
ծովի վրայ փոթորկի կը բռնւի. նաւը իր ուղղութիւնը  
կորցրած՝ կ'երթայ գէպի Ախլաթի եղերքը: Երկար յոդ-  
նութենէ յետոյ՝ հաղիւ կը յաջողի նաւը գուրս բերել  
կծփակի մօտերը: Գէորգ Զավուշ խմբով գուրս կուգայ  
ափը և քարբարուներու մէջէն կը շարունակէ ձամբան:  
Մութին մէջ իրենց զիմաց յանկարծ կը ցցւին ու ու  
շարժւող ստերներ: Ատոնք կառավարական զօրքեր էին,  
որոնք պահպանութիւն կ'ընէին սյդ կողմերը: Երկու  
կողմէն ձայն կուտան իրարու և հրացանաձգութիւնը  
կըսկսի: Մերոնք թէ կը կուին և թէ կը յառաջանան, մին-  
չե որ կ'անյայտանան գիշերւան մթութեան մէջ: Կուի  
տագնապի մէջ ընկերներէն ոչ ոք չի նկատեր ետ մնացող  
Աստուրը, որ ծանր կերպով կը վիրաւորւի ու վար կ'իյ-  
նայ: Նկատելով ինքզինքը միայնակ և մահամերձ վիճակի  
մէջ՝ կը կոտրէ հրացանը ու ծովը կը նետէ, ապա ինքն  
ոլ անոր եակէն: Մեր նահատակ ընկերը նախորդ շատ  
մը կուիւներու մէջ իր քաջութեամբ միշտ յայտնի եղած  
էր: Թիւրքերէն կըսպանւին չորս հոգի:

14. *Umbrella*

Убк Уазб

ՄՈՏԿԱՅ

Fink Ull Eß

## ԱՐԻՑ-ԱՎԱՐԻՆ

2. 3.

1904, ՁԵՆԻԿ

ՊԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ .



Հ Ա Յ Յ Ե Լ . Գ Ա Յ Ն Ո Կ Յ Ո Ւ Թ Ե Խ Ն  
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԵՐԸ

|  | Ժ. Ա. |
|--|-------|
| 1. Ապատամբական ոզի (սպառւած) . . . . .                       | .10   |
| 2. Ցեղախոխական կեսնիլից (սպառ.) . . . . .                    | .05   |
| 3. Պաղտնի սպառան (սպառ.) . . . . .                           | .05   |
| 4. Գիտական աօցիալիքմ. Ֆ. Էնդել.Ս (սպառ.) . . . . .           | .40   |
| 5. Հայ Յեր. Փաւանագործեան ծրապիր. (Բ. սպառ.) . . . . .       | —     |
| 6. Կոմիտասնան խմբի առաւանինը. (սպառ.) . . . . .              | .20   |
| 7. Կոմիտասնան յիշատակին (ջորի ճուռած) . . . . .              | .50   |
| 8. Հ. Յ. Գ. Երևաց բնիք. Ճողովի առևնագործիւնը . . . . .       | —     |
| 9. Երիշենը. Հոմո հոմի լուս. Վ.Ա.ՊԴԿ.Ս (սպառ.) . . . . .      | .20   |
| 10. Երիտասարդներին. Պ. ԿՐ.ՊՕՏԻՆ. (սպառ.) . . . . .           | .20   |
| 11. Ազատութեան նախապատրին. Ղ.Ա.Թիֆ. Ա. (սպառ.) . . . . .     | .30   |
| 12. " " " " " . . . . .                                      | .60   |
| 13. Կայուսային տամարանութիւն. Է.Լ.Ե.Ն. (սպառ.) . . . . .     | .50   |
| 14. Ազատութեան նախապատրին. Ղ.Ա.Թիֆ. Գ. . . . .               | .30   |
| 15. Հայուսան և Շամիկանիտ. . . . .                            | .50   |
| 16. Կոմիտասնան վերեւ. Է. Ա.Կ.Ա. (սպառ.) . . . . .            | 3.00  |
| 17. Հայունիթի գաղափարը. Մ. Վ.Ա.ԲԱՆԴԵԼ.Ն (սպառ.) . . . . .    | 1.00  |
| 18. Կազմութեապական կունուներ. . . . .                        | —     |
| 19. Գեղի կուն. Է. Ա.Կ.Ա. (սպառ.) . . . . .                   | 2.00  |
| (Կոմիտաս 1 րուրի, Ամերիկա՝ 1/2 դոլար).                       |       |
| 20. Ցեղախոխականներ. Պ. Կ.Բ.Վ.Ա. (սպառ.) . . . . .            | .20   |
| 21. Կախազիձ Կոմիտասնան զարձութեապական. (Բ. սպ.) . . . . .    | —     |
| 22. Պօւտի ցարիզա. Վ. Արարատskij . . . . .                    | .50   |
| 23. <b>Les tueries de Bakou</b> A. ARAZI . . . . .           | .20   |
| 24. Ցեղախոխական զամբ. . . . .                                | .20   |
| 25. Հ. Յ. Երևաց բնիք. Ճողովի առևնագործիւնը . . . . .         | —     |
| 26. Առy Շահնշահութեան (քուբերէն) . . . . .                   | .10   |
| 27. <b>Les Plates du Caucase</b> E. AKNOUNI . . . . .        | 2.00  |
| 28. Ազատութեան նախապատրին. Ղ.Ա.Թիֆ. Գ. գրեյլ. . . . .        | .40   |
| 29. Մեծ մարզապանի դեմ (Քատայութիւն) . . . . .                | .50   |
| 30. Վեհաջրի բարեկ. Վ.Ա.ԲԱՆԴԵԼ.Ն . . . . .                    | .50   |
| 31. Ցեղախոխականի մաքեր. Պ. ՄԵ.Բ.Յ.Լ.Ե.Ն (Մամ. սալ) . . . . . | .50   |
| 32. Հայունիթեր. Մ.Ա.Մ.Յ.Յ.Յ. . . . .                         | .50   |
| 33. ՍասունաՄուսի կունուներ . . . . .                         | .50   |

Դիմել՝ «Դրոշակի» լոմբազրութեամ, Ժը Ձ Ե Վ:

Հայաստանի Ազգային գրադարան



NL0425349

14921